

22



ԱՅՍ ՀԱՄԱՐՈՒՄ...

- * ԱՄԱՆՈՐՅԱՆ ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄՆԵՐ
- * ՄԻՈՒՆ ՆԱՅԻՐՅԱՆՆ ԱՋՍԵ Է
- * ԳԱՅ. ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԵՎ «ԱՐԱՔՍ» ԱՄՍԱԳՐԻ ԳԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ
- * ԳԱՅԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ
- * ՇԱՐԺՈՒՄԻ ԳԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ
- * ԼԵՎՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԳԵՈՒԿՍԱԵԼՈՒՅԹԸ
- * ԳԳ ՆԱՆԱԳԱՅԻ ԴՐԱՄԱՆԱԳԻՐԸ
- * ՃԳՆԱԺԱՄ ԳՅԴ ՇԱՐՔԵՐՈՒՄ
- * ՄԵ ԱՅԴ ԶԱՐԱԲԱՍՏԻԿ ՏԵՍԱԵՐԻՋԸ
- * ՊԵՊ ԱՐԵՎԵԼՔՆ ԱՍՏՎԱԾԱՅԻՆ
- * ԳՐԱԿԱՆ ԿԱՆԳՍՈՒ
- * ՃԱՆԱՉԵՆՔ ՄԵՐ ԵՐԵՆԱՅԻՆ
- * ԱՄՆԿԱ-ՊԱՏԱՆԵԿԱՆ ԷՋ

ԲԱՅՄԱՆ

ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ ԻՍԼԱՄՄԱԿԱՆ
ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ 16-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԸ



ماهنامه آراکس

فرهنگی، اجتماعی، ادبی
 زیر نظر: یعقوب گریگوریان
 آدرس: ایران، تهران
 صندوق پستی ۱۶۷۶/۱۳۳۶
 تلفن و فکس: ۸۸۳۲۲۳۸
 چاپ و لیتوگرافی از: هاشمیون ۷۶۵۰۲۸

ԱՐԱՔՍ

ԳՐԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
 ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄՄՍԱԳԻՐ

ԱՐՏՈՆԱՏԵՐ

ՀԱՎՈՐ ԳՐԻ ԳՈՐԾԱՆ

Թերթը հրատարակվում է
 խմբագրական կազմի
 միջոցով
 գլխավորությամբ
 Սովսես Բեհեյանի

ՀԱՍՑԻ ՓՈՍՏԱՐԿՂ
 16765-1336 ԹԵՀՐԱՆ, ԻՐԱՆ
 Հեռ. եւ Հեռագրատճեճ՝ 8832238

ARAX MONTHLY

P.O.BOX 16765-1336
 TEHRAN_IRAN
 Tel & Fax
 0098-21-8832238

جهت درج آگهی در نشریه

با شرکت ویرا تماس حاصل نمایید

تلفن ۸۲۶۷۰۲

ՀԱՏԱՎԱԾԱՌ
 1000 ՌԻԱԼ

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Տեխնիկական դժվարությունների պատճառով մի քանի ամսով կանգ էր առել ամսագրիս հրատարակումը: Ընթերցողներից ներողություն խնդրելով հույսով ենք այսուհետ չենք հանդիպի մման դժվարությունների եւ ամսագիրը կհրատարակվի ամիսը մեկ անգամ՝ ըստ մեր պայմանավորվածության:

խմբագրություն

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- * ԱՄԱՆՈՐՅԱՆ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔՆԵՐ3
- * ՍԻՄՈՆ ՆԱՅԻՐՅԱՆԸ ԱԶԱՏԷ3
- * ՀԱՅԿԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԵՎ «ԱՐԱՔՍ» ԱՄՍԱԳՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ4
- * ՀԱՅԿԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԵՎ «ԱՐԱՔՍ» ԱՄՍԱԳՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ5
- * ՀԱՅԿԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՄԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ6
- * Լ. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՀԵՌՈՒՍՏԱԵԼՈՒՅԹԸ7
- * ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ9
- * ՊԱՇՏՊԱՆՈՒՄ ԵՆ ՀՐԱՄԱՆԱԳՐԻՑ9
- * ՃԳՆԱԺԱՄ ՀՅԴ ՇԱՐՔԵՐՈՒՄ10
- * ՃԿՈՒՍԱԿՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՊԱՇՏՊԱՆՈՒՄ ԵՆ ..10
- * ԱԽ ԱՅԴ ՉԱՐԱՔԱՍՏԻԿ ՏԵՍԱԵՐԻՉԸ11
- * ԴԵՊ ԱՐԵՎԵԼՔՆ ԱՍՏՎԱԾԱՅԻՆ12
- * ԻՐԱՆԱՀԱՅ ԴԵՄՔԵՐ14
- * ԳՐԱԿԱՆ ԿԱՆԳԱՌ16
- * ՃԱՆԱԶԵՆՔ ՄԵՐ ԵՐԵՆԱՅԻՆ20
- * ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ21
- * ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԼՈՒՐԵՐ25
- * ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՄՈՒԼ27
- * ԳՈՎԱԶԴԴՆԵՐ28

ՆԵՐԱՌՅԱԼ ՄԱՆԿԱ-ՊԱՏԱՆԵԿԱՆ ԷԶԻ

فهرست مطالب بخش فارسی

- * پیامهای تبریک۲
- * سخنرانی تلویزیونی رئیس جمهوری ارمنستان۳
- * روابط ترکیه و روسیه۴
- * ترکیه و شورای همکاری کشورهای۵
- * حوزه دریای سیاه۵
- * شعر مادرانه در ادب ارمن۷



Ամանորեան եւ Ս. Ծննդի պատգամ

Այսու սրաշոտական գրով, շանտն Ատրպատականի Հայոց թիմի ազգային իշխանութիանց, Թիմական ետրհրդի, համայնքի եւ մեր, անհուն ուրախութիամբ շնորհատրում ենք Ձեր բոլորի Ամանորեան եւ Աստածայայա-տնութեան Տօները:

Սրտանց մտղթում ենք, որ յառաջիկային ատուել եւս պրկած եւ գօտեպղզած ուժերով, անասան կամքով եւ աստածաշնորհ աշխատանքներով հայ իրականութեան մէջ Ձեր կատարելիք բոլոր առաքելութիւնները շինել, օգտա-կար եւ պողալից լինեն:

Աստուած այնքան սիրեց աշխարհը՝ որ իր Միածին Որդին Յիսուսը աշխարհ առաքեց, մարդկութեան փրկութեան համար: Զիչդ այս պատճառով է, որ Քրիստոս Երուսողեմում էր Վարդապետութեան տարածման ամբողջ ընթացքում «Սէր» պատգամեց, Քրիստոս միայն ու միայն «Սիրեցեք իրար» աստուածային պատուիրանը փոխանցեց եւ իր իսկ կեանքով ՕՐԻՆԱԿ դարձաւ համայն մարդկութեան:

Եկեք այս պատուիրանի հրամայականի ներքոյ մեր յառաջիկայի բոլոր աշխատանքների վերնագիրը դարձնենք աստածատուր Սէր-ը, որով ծառայութիւնը ստաշնակարգ օրակարգ պատելով կատարենք մեր սրտի եւ հոգու սրբութեւր ասելով. «... Ինչ որ սրբաւորուր էինք անել՝ կատարել ենք» (ՂՈՒԿԱՍ 17:10):

Շնորհատր նոր Տարին՝ 1995 թիականը
Քրիստոս ծնաւ եւ Յայտնեցաւ
Օրհնեալ է Աստածայայտնութիւնը:

Չերտօրէն Արթուրար
ՆՇԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԹՕՓՈՒԶԵԱՆ
ԿԱՌՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՓՈՈՒՆՈՐԴ
ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ
25.12.94

ՄԻՍՈՆ ՆԱՅԻՐՅԱՆՆ ԱԶԱՏ Է



Անցյալ տարւա դեկտեմբերի 29-ին (8 դեյ) Ֆրանսիայի քանտեղից ազատ արձակվեց ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՅ ԳԱՂՏՆԻ ԲԱՆԱԿԻ անդամ Սիմոն Նայիրյանը, եւ Հայաստան մեկնեց: Նայիրյանը 1983 թվին դայաբող Վարուժան Կարաղեյանի հետ Ֆրանսիայի Օռլի օդակայանում քրական գրասենյակի ռմբահարման անհիմն ամբասանությամբ ձերբակալվել, առաւ 15 տարւա անարդար քանտարկության տր դասադարձվել:

Նայիրյանի եւ Կարաղեյանի ձերբակալումը մեծ դժգոհություն առաջացրեց հայ ժողովրդի հասկադեա Ֆրանսահայության մոտ, որոնք տարիներ շարունակ դասադարձանքի նամակներ հղեցին Ֆրանսիայի իշխանութիւններին: Իսկ Ֆրանսիան, որը որոշել էր ամեն գնով հարկածել հայկական նորագոյն ազա-



Իրանի Իսլ. հեղ. մեծարգո առաջնորդ այաթ. Խամենեյիի շնորհավորականը Հ. Քրիստոսի ծննդյան առթիվ

Շնորհավորում եմ հանուն բարձրայ եւ մեծարգո մարգարի Հիսուս Քրիստոսի Ս. Ծնունդը համայն աշխարհի հատկապես Իրանում ապրող քրիստոնյաներին ու մուսուլմաններին:

Աստուծո այս ընտրյալ մարգարեն, մարդկանց առաջնորդում էր դեպի Աստուծո ուղին, որը բախտախորթութեան ուղին էր եւ նրանց ղգուշացնում էր շարից ու վատից, հոգու ապականումից, եւ բոնաթյունից: Բռնակալ ու նեխած ուժերը, ուժի եւ ուխտ աղբակները, աստուծո մարգարեին տանջեցին, ամբաստնեցին եւ անգամ նրա կյանքը սպառնեցին բայց երբ Աստուծո նրան իր հովանու տակ առավ եւ նրա առաքելներին ու հետեւորդներին երկար տարբեր բազմաթիվ տանջանքների ենթարկեցին, սրբապի ոչնչացվի աստուծո մարգարի ուսուցումները, որոնք պայքարում էին սարսկանութեան, բռնապետութեան, անհավատութեան, ու շարի դեմ:

Նրանք ուղբեր բռնապետ էին ու սաղմամուլ, չէին կարողանում ընկունել Աստուծո կրօնը եւ մարգարեին ու նրա հետեւորդներին:

Այսօր նույնպես, նմանատիպ ուժերը պատրաստ չեն համբերելու Աստուծո զավակներին եւ կրօնին ու ճշմարտութեան հետեւորդներին:

Հ. Քրիստոստին հետեւ առնելով եւ առաքապետութեան, ճշմարտագիտութեան բռնապետների հանդեպ ունեցած ատելութեանը:

մենք հույս ունենք, որ Քրիստոնյաները եւ մուսուլմանները աշխարհի տարբեր վայրերում Աստուծո մեծ մարգարի Քրիստոս այս ուսուցումը իրենց եւ գործի հիմքը դարձնեն:

Բարձրքայն աստուծոց հայցում եմ, որ Քրիստոնեական նոր տարին բոլոր ժողովուրդների եւ ամբողջ մարդկութեան երջանկութեան եւ հաջողութեան տարի լինի:

ԽՈՍՔ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ

Թեհրանի «Արարատ» մարզավանում կազմակերպված «հանրահավաք» ի տաճառությունն Ռաճնակ կուսակցության արկածախնդրության ծախողվեց հանձինս թեհրանահայության գգոն վերաբերմունքի:

«Հանրահավաքին» մասնակցելու հազարավոր կոչ-թուղթիկներին հետեւեցին հազիվ թե հազար հոգի: Այսինքն, հարյուր հազարից ավելի թիվ ունեցող թեհրանահայ գաղութի մեկ տկոսից էլ դակաս: Իսկ այդ չնչին տկոսի ներկայությունը նույնիսկ կարելի է բիրտվածության արդյունք համարել...

Գնահատանի է արժանի այն ժողովուրդը, որը հրատաղ տայմաններում ի զորու է գիտակցաբար մոտենալ հարցերին եւ ճիշտ գնահատել դեմքերը:

Շնորհակալության մեր խոսքն ենք ուղղում թեհրանահայության հասկալի մեր հոգեւոր հայրերին, որոնք չունեցան հասկածական ուղղվածություն, այլ տաճառներին համայնքի բաժները անկախ տարբեր հայացքներից, եւ դրանով իսկ փաստեցին, որ ի զորու են գտնել իրենց արժանի տեղը համայնքի մեջ, տեղիք չտալով արկածախնդրական ծնունդներին: Ուզում ենք հավասալ, որ մեր հոգեւոր հայրերը դիտարկեցին այս ազգագույն եւ ժողովրդանվեր կեցվածքը եւ վստահ լինեն, որ այդ դեմքում ժողովուրդն իրենց հետ է լինելու:

Տեղին է գնահատել նաեւ այն ազնիվ դաճնակցականներին, որոնք գիտակցելով տաճի լրջությունը, հեռու մնացին կուսակցական նեղմտություններից եւ չմասնակցեցին տւթյամբ ծախողված «հանրահավաքին»:

Ողջույն եւզ գիտակից իրանահայություն, թող ընդմիշտ օրինակելի դառնաս բոլոր հայագաղութների համար:

ՀԱՅԿԱԿԱՆ
ԺՈՂՈՎՐԳԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ
ԵՎ
«ԱՐԱՔՍ» ԱՄՍԱԳԻՐ

29 հունվարի 1995

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ռաշնակ կուսակցության քանդիչ գործունեությունը կասեցվեց Հայաստանում, որով խափանվեց ոչ միայն Հայաստանի կայունության սպառնալիքը այլև Կովկասի եւ շրջանի երկրների անապահովության վտանգը: Ահա դրան ի հետեւանք սույն կուսակցության ենթաճյուղերը գրգռելով հաշ համայնքներին, հատկապես շրջանի երկրներում, կույր փորձեր են կատարում խռովահույզ իրավիճակը ավելի սրել:

Ռաշնակ կուսակցությունը, որ արդեն իսկ ծայրահեղական իր դիրքորոշումներով հայտնի է ոչ միայն հայությանը, այլև շրջանի մյուս ժողովրդներին, իր անպատասխանատու գործունեությունը իրականացնելիս չարաշահում է հայկական տարբեր կառույցները. դրա պատուն օրինակն է՝ ուրբաթ հունվարի 27-ին «Արարատ» մարզավանում կազմակերպված հանրահավաքը:

Իրանահայ համայնքին հարց ենք թալի թե՛ «Արարատ» մարզավանը ինչ առնչություն ունի Հայաստանում Ռաշնակ կուսակցության հետ կապված վերջին իրադարձություններին:

Մշակութային կենտրոնները ինչպե՞ս են իրենց թույլատրում ծառայելու այս կուսակցության կասկածելի նպատակների իրագործմանը:

Ավելի ցավալին այն է, որ Թեհրանի Հաչոյ Թեմի Թեմական Խորհուրդը ինչպե՞ս եւ ի՞նչ տրամաբանությամբ է որդեգրում միակողմանի մոտեցում՝ հայկական ազգային կառույցները լիովին տրամադրելով սույն կուսակցության կասկածելի նպատակներին:

Արդյո՞ք Թեմական Խորհրդի կազմում, ուր շուրջ մեկ տասնամյակ ընտրություններ չեն եղել, չկա որեւէ ապատամիտ եւ արդարատենչ մի կանչ, որ հայ հոգեւորականության դեմ իրագործվող դաշնակ կուսակցության ծայրահեղ ճնշումների դեմ բողոքի ու ապատության ձայն բարձրացնի:

Հայկական Ժողովրդային Միությունը եւ «Արաքս» ամսագիրը իրենց վրա վերցրած պատասխանատվության եւ պարտավորության բերումով՝ հանրային կարծիքը պարզաբանելու ուղղությամբ, նախատում են նմանատիպ դիրքորոշումներն ու անպատասխանատու քայլերը, որոնք կատարվում են Թեմական Խորհրդի անվան ներքո:

Ուստի ընդգծում ենք.

Ա- Ոչ մի խմբակցություն կամ կուսակցություն իրավունք չունի իրանահայ համայնքի անունից խոսել եւ իր նպատակներն ու դիրքորոշումները նրան վերագրելով ներկայացնել աշխարհին:

Բ- Հայկական մարզա-մշակութային կառույցներն ու Թեմական Խորհուրդը չպիտի որեւէ կուսակցության քարոզչության բեմ հանդիսանան. ուստի որեւէ մեկին թույլատրված չէ շահագործել սույն հաստատությունները քաղաքական մութ նպատակների համար:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ հայ ժողովրդին առաջնորդելու եւ հայրաբար ուղղություն տալու վեհ առաքելությունը վերապահված է հայ եկեղեցուն, ուստի անհրաժեշտ է, որ գիտակից եւ պայքարող հոգեւորականությունը հակապոպեզություն ցույցաբերելով ՀՅԴ-ի ճնշումների դեմ շենթարկվի նրա քմահաճույքին:

ՀԱՅԿԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

«ԱՐԱՔՍ» ԱՄՍԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՅՍՏԱԿԱՑՈՒՄՆԵՐ ՅԱՅԿԱԿԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՅ ԵՒ ՅԱՌԱՋԻԿԱՅ ՀԱՆԳՐՈՒԿԱՆ ՀՐԱՏԱԴ ՎԱՐՑԵՐՈՒ ԸՈՒՐՋ

Վերջին տարիներում համաժամարտային և հայկական գեների վրայ տեղի ունեցած փոփոխություններում դասձառով, անյիշեաձգելի անհրաժեշտությունը կը զգացուի ազգովին կատարել կարգ մը յսակացումներ և հաստատումներ, որոնք հիմք դառնալու ծառայելու յարաբերական հանգրուանին ազգային դասի հետադարձման և Հայաստան-Սփիւռք յարաբերություններու գծով համահայկական ռազմավարութեան մը բանաձեւման և մարտավարական գործընթացի մը սահմանման համար:

Այս Երջագիծն ենք Հայկական ժողովրդային Շարժումը սոյն յայտարարութեանը կը նկայացնէ իր համոզումները, ընթրնումները և առաջադրանքները:

Հայաստանի անկախացումն ետք, նոր իրավիճակ մը ստեղծուած է հայկական իրականութեան մէջ և անոր հետեւանումով, նոր ընթրնումներ ածած Սփիւռքի տարածքին:

Նկատի առած ազգային դասի անհանջատիւութեան նկատմամբ դրսեւորուող հակառակական որոշ տեսակէտներ, որոնք մեր գանգուածները կ'առաջնորդեն առկալողմնորոշման և շփոթի, կը հաստատեն թէ հայութիւնը չի կրնար հրաժարիլ իր իրավունքներէն և բռնագրաւուած հողերէն: Համայն հայութիւնը իր ուժերը համալրելով դէպք է հետադարձ իր արդար դասը:

Սիւնուոյն ասեմ Հայաստանի Հանրապետութեան հզօրացումը հզօրացումն է հայութեան նիւթական ու ոգեկան արժէքներուն և ձեռքբերումներուն, անճնուրեմ և անճն ժամանակներուն մէջ: Հայաստանի Հանրապետութեան զօրավիզ հանդիսանալը սակայն, սփիւռքահայութեան համար քաղաքական նպատակ չէ, այլ ազգային դասարարութիւն: Սփիւռքի դասարարութիւնները չեն կրնար սահմանուիլ սոսկ Հայաստանի Հանրապետութեան նեցակցութեանը, որովհետեւ Սփիւռքը ըլլալով մարդկային և հողային իրաւագրկման արդիւնք, ազգային-քաղաքական դասարարութիւններ ունի կատարելի, որոնք համար դասարարիչը անոր կուտայ գոյատեւման իմաստ և քովանդակութիւն:

Ներկայիս նոր մօտեցումով մը, կը փորձուի Հայաստան-Սփիւռք յարաբերությունները հիմնականօրէն սահմանել տեստական և առեւտրական Երջագիծ ենք: Հայաստան-Սփիւռք յարաբերությունները այս Երջագիծն ենք սահմանափակուիչը, ժամանակի ընթացքին առիթ կրնայ ստեղծել, որ փոքրաքիւ ընտրանի մը այդ յարաբերութեանց առանցք դառնալով, անճնական կամ խմբային մեծաւորի վերածել գայն, ինչ որ սփիւռքահայ գանգուածները դիտի մղէ անտարբերութեան և հետեւաբար քաղաքական անլացման: Այն բոլոր փորձերը, որոնք Սփիւռքի դերը միայն Հայաստանի Հանրապետութեան ստատելու ծիրէն ներս կը սահմանեն, անելի են կ'առաջադրականացնեն Սփիւռքը: Քաղաքականացած Սփիւռք մը Երջագիծն ենք առեւտրական կը հանդիսանայ Հայաստանի Հանրապետութեան:

Իսկ Հայաստան-Սփիւռք յարաբերությունները զգացական սահմաններու մէջ սեղմելը, գայն կը դարձնէ փխրուն ու գնայուն երեւոյթ: Հայաստանի Հանրապետութեան և Սփիւռքի առաւելութեանց ու դասարարութեանց համազգային մակարդակով միտք գնահատումը և բանաձեւումը, այդ յարաբերությունները կը դարձնեն անելի ազգանդաստ և հաստատուն իրողութիւն:

Հայկական հարցի հետադարձումը նախադէպ միմիայն խորհրդային իսկ այժմ հանրապետական Հայաստանի դեպտականութեան արդիւնքին, այդ հարցին մէջ Սփիւռքի իմնուոյն դերակատարութիւնը գեղջելուն համազօր երեւոյթ է: Այս, խուսափողական և դասարարական կեցուածքի արտայայտութիւն է, որ կը փորձէ հայ դասի լուծման գծով անգործունէութիւնը արդարացնել նման տեսություններով: Այս միտքը կ'անտեսէ կամ կ'անգիտանայ այն դասական փաստը, թէ դժուար է մանաւանդ միջազգային յարաբերություններու ներկայ հասկացողութեան լոյսի տակ, գոյութիւնը ազատագրական դասարար հետադարձող դեպտություններու: Ընդհանրապէս ազգ-դեպտութիւն մը չի կրնար որդեգրել ազատագրական առաւելություններ, ազգ-դեպտութիւն մը կրնայ քաղաքական միջադեպտություններ կատարել այն ասեմ, երբ միտքն ժողովուրդի անիրաւուած գանգուածները կը դասարարին իրենց ոտնահարուած իրաւունքներուն համար: Արջախեան դասարար վերոնշեալի լաւագոյն նմուշներն մին է:

Սփիւռքը դէպք է ներաւուի Հայաստանի Հանրապետութեան այն հարցերուն մէջ, որոնք համազգային բնոյթ չունի նման հարցերուն նկատմամբ որոշում որդեգրելու իրաւունքը և դասարարականութիւնը կը դասարարականի Հայաստանի ժողովուրդին: Այն իրողութիւնը, որ տասնիներորդ դարու վերջաւորութեան, յեղափոխական կարգախօսներով և Արեւմտահայաստանի ազատագրութեան նպատակով ծնունդ առած հայկական կուսակցությունները, այսօր ներաւուած են Հայաստանի Հանրապետութեան ներս յանուն իշխանութեան մղուող դասարարին մէջ, վերածուելով խորհրդարարական կուսակցություններու, անելի են կը շեշտէ յանուն ազատագրութեան Սփիւռքի յանճնատու Երջանականներու անելի են անոր հիմնելու վրայ կազմաւորման անհրաժեշտութիւնը:

Սփիւռքը անճն դուրսներէ ներս դէպք է ունենայ ուժական ներկայութիւն, որովհետեւ հայութիւնը իր դէմ ունի թուրք ռազմականացումը դեպտութիւնը, որ ուրիշ լեզու չի հասկնար բացի ուժի լեզուն: Թուրք դեպտութեան տիւրքները անգամ մը են ինքզինք կը դրսեւորէ յայտարար արջախեան և ընդհանրապէս կովկասեան իրադարձութեանց մէջ, գործնականօրէն անճն տեղ և բոլոր հնարաւոր միջոցներով վնասելով հայ ժողովուրդի շահերուն: Ուժական Սփիւռքի մը գաղափարին հակառակիչը, կը նշանակէ մերժել որեւէ դասարարի տակ, հայանդաստ քայլեր առնելու կամ հայազմաստ գործունէութիւն վնասագրեւելու: Սփիւռքի ազգու միջադեպտություններ կատարելու հնարաւորությունները:

Հայկական Ցեղասպանութեան 80-ամեակի և ազատագրական դասարարի վերսկսման 20-ամեակի նախօրէին, հայ դասի հետադարձումն մեծ գործին համար անհրաժեշտ վերոնշեալ հաստատումները կատարելով, Հայկական ժողովրդային Շարժումը կը վերահաստէ իր անկուտուն վճռականութիւնը ընդանալու հայ ժողովուրդի անկուտելի իրաւունքներու ձեռքբերման ճանադարաին մինչեւ վերջնական յարթանակ:

15 Դեկտեմբեր 1994

ՀԱՅԿԱԿԱՆ ԺՈՂՎՈՐԴԱՅԻՆ ՇԱՐՇՈՒՄ

Լեւոն Տեր-Պետրոսյան.

«Իրականում Դաճնակցության էությունը եղել է հենց այս գաղտնի կառույցը»

կամ ինչ պատահեց Հայաստանում 94 թվականի դեկտեմբերին

Փոքրկալից եր Գայասանի Գանրադեսության ֆաղա-
փական կյանքը անցյալ արվա վերջին ամսում: Դեկտեմ-
բերի 3-ին Գայասանի լրատվական միջոցներում հրա-
դարակվեց մի լուր, ըստ որի, Գայասանի Գանրադե-
սության եւ Ռուսաստանի հակահետախուզության ուժերի
համատեղ գործունեությամբ բացահայտվել է մի
հանցավոր խումբ, որը զբաղվել է միջազգային
թմրաբիզնեսով: Մի ֆանի օր անց, Գայ Գեղափոխական
Դաճնակցության ղեկավարությունը հրավիրեց մամուլ
առուլիս («Այս այդ չարաբաստիկ սեսաերիզը» հոդվա
ծում կարգացե՛ք այդ մասին): Երբ Գայ Գեղափոխում
հայտնվեցին այն լուրերը, իբր թե, Գայասանի
ուսիկանությունը ձերբակալել է Արցախի «ամե
նանճանակվոր» պատասանարհիկներից մեկին՝ Գրան
Սարգսյանին:

Դեկտեմբերին տեղի ունեցավ երեւանի նախկին
ֆաղափազուլի Գանրադում Գալստյանի սղանությունը:
Գալստյանը եղել էր «Դարաբաղ կոմիտեի» անդամ, ԳԳ
նախագահի նախկին զինակիցների մեկը, որը վերջին
ծամանակներում հրաժարվել էր ֆաղափական կյանքից եւ
զբաղվում էր բիզնեսով: Սակայն, մինչ այդ, հայաարե
լով իր հայացքները, դարգել էր, որ արդեն
ընդդիմակցության մեջ է գտնվում ԳԳ իշխանությունների
հանդեմ: Գանրադում Գալստյանի սղանության փաստը,
մեծ լարվածության առիթ հանդիսացավ հանրադեսու-
թյան ֆաղափական կյանքում:

Ընդդիմադիր կուսակցությունները փորձեցին այն վե
րագրել իշխանություններին: ԳԳ, ԱԺԱ, եւ «Ազգային
առաջադիւթություն» կուսակցությունների Գերագույն
խորհրդի Ցրակցիաների անդամները հրաժարվեցին
մասնակցել խորհրդարանի աշխատանքներին (ընդամենը
39 հոգի, ԳԳ ԳԳ ընդգրկում է ռուջ 260 դասգամա-
վորներ), ստեղծելով «Ազգային դասգամավորական
ծողով» ինքնակոչ խորհրդարանը: Սակայն, մի ֆանի օր
անց, Գայասանի Ազգային անվտանգության դեսական
վարչության կողմից հրադարակվեց Գ. Գալստյանի
սղանության մեջ կասկածված անձի անունը Միխայել
Մանուկյան (ԳԳԳ անդամ): (Երան Ցանաչել էր
Գալստյանի եղբայրը, որը սղանության դահին գտնվում
էր նրա մոտ):

Նույն օրերում հրադարակվեց «Գայասան» միավոր-
ման նախագահ, ԳԳԳ անդամ՝ Աոն Աբրահամյանի
վկայությունները կուսակցության Ֆինանսական անօրի-
նական գործունեության մասին (հավելյալ տեղեկու-
թյունները կարող եք ստանալ «Այդ չարաբաստիկ սեսաերի-
զը» հոդվածից):

Իսկ դեկտեմբերի 28-ին ԳԳ նախագահ Լեւոն Տեր-Պե-
տրոսյանի ելույթը Գայասանի հեռուստատեսությամբ, վերջ
ի վերջո դարգարանումներ մտցրեց վերոհիշյալ բոլոր
չդարգարանված հարցերում: Նա իր ելույթի սկզբնական
հասվածից հետո հրադարակեց հետեյալ լուրը.

«Ա. թ. դեկտեմբերի 2-ին, երկարատե նախադասրասա-
կան աշխատանքից հետո, Գայասանի Ազգային ան-
վտանգության դեսական վարչության եւ Ռուսաստանի
Գակահետախուզության Ֆեղեբալ ծառայության համատեղ
գործողությամբ, միաժամանակ Մոսկվայում եւ երեւա-
նում, բացահայտվեց մի հանցավոր խումբ, որն զբաղ-

վում էր միջազգային թմրաբիզնեսի Բեյրութ-երեւան-
Մոսկվա այլ երկրներ երթուղու իրացմամբ: Կասարված
ձերբակալությունների եւ խուզարկությունների արդյուն-
քում առգրավվեց ռուջ հինգ կիլոգրամ հերոին, մեծ ֆա-
նակությամբ գեմ եւ զինամթեր, դայթուցիկներ, ռադիո-
սարբեր, կեղծ անձնագրեր, ինչդես նաեւ գաղտնի հեսա-
խուզական կազմակերպության մի հսկայական արխիվ
506 կոմյունիստային դիսկեթ եւ տասնյակ ձեռագիր
բղթադանակներ:

Ընդհատակյա այդ կազմակերպությունը, որ առգրավ-
ված փաստաթղթերում կոչվում է «ԴՐՈ հասուկ ծառա-
յություն», ստեղծվել է 50-ական թվականներին «ԳԳ
Դաճնակցության» բարձրագույն մարմնի՝ բյուրոյի որո-
մամբ: Այն ունի իր ձյուղավորված ստորաբաժանումները
աշխարհի մի ռար երկրներում: Գայասանում հիմնա-
վորվել է 1992 թվականին եւ գործել ԳԳ Գայասանի
կենտրոնական կոմիտեի գիտությամբ: Ծառայության հա-
յասանյան ստորաբաժանումները զլխավորել են երկու
սղյուռնահայ: Ծուրջ հիսունի հասնող անդամների մեծ
մասը հայասանցի է, կամ նաեւ արտասահմանյան
ֆաղափացիներ»:

Իսկ թե ինչով է զբաղվել «Դրոն» նախագահը իր ե-
լույթում նեել է.

«Գայասանյան ստորաբաժանումը զբաղվել է կուսակ-
ցության Ֆինանսական աղահովմամբ, հակադեսական
հեսախուզական աշխատանքով, անօրինական տնտեսա-
կան գործունեությամբ, միջազգային թմրաբիզնեսով,
ահաբեկչական գործողություններով, որոնց ընթացում

«Ես համոզված եմ, եւ դա ցույց է տալիս նաեւ
այս արխիվը, որ կուսակցության 90 տկոսը
տեղյակ չէ դաճնակցության ներսում գաղտնի
կառույցի գոյությանը: Բայց իրականում
դաճնակցության էությունը եղել է
հենց այս գաղտնի կառույցը»:

իրականացվել են մի ռար ֆաղափական սղանություններ:
Ի դեմ, հասուկ ծառայության անդամները նախադես
գրավոր տեղյակ են դահվել, որ «ԴՐՈ կառույցը իր
նդասակների իրագործումին համար ոչ մեկ բարոյական
սահմանափակում չի տեսներ» կամ «անդամագրվող ըն-
կերը դես է լավադես գիտեսա, որ ինքը մտնում է մի
այնդիսի կառույցի մեջ, որի գործունեության բնույթը
դեսական օրենքներով խստրեն արգելված է» կամ էլ
«Գայ Ցեղափոխական Դաճնակցության ԴՐՈ կառույցի
նդասակն է նյութական միջոցների որոնումը մեր կու-
սակցությունը անաղահինը եւ հզոր դահելու նդասակով-
նման միջոցները կարող է լինել օրինական եւ, բայց
նաեւ անօրինական գործարներ»:

Իր ելույթի մյուս հասվածներում ԳԳ նախագահը
մանրամասնորեն բացահայտել է «Դրո» գաղտնի
ծառայության գործունեությունը.

«1. Գեսախուզություն
Սեփական գործակալների եւ ներթափանցումների մի-
ջոցով «ԴՐՈ» ծառայությունը հեսախուզել է Գայասանի

դեռևս անհամաձայնության, հասկալի Զայասանի բանակի, Ազգային անվանական զորքերի անվանական զորքերի նախարարության, Զայասանի Զանառայության նախագահի ազգային անվանական զորքի գլխավոր խորհրդականի աշխատակազմի աշխատանքը:

... 2-րդ փուլում հետաքննվել է, որ այս գաղտնի ծառայությունը հետախուզություն է իրականացրել անգամ սեփական կուսակցության ներսում: Այս ծառայությունը դոսիեներ է հավաքել դաժնակցականների վերաբերյալ, այսինքն նաև ներքին հակահետախուզության դեմ է կատարել:

2. Տնտեսական գործունեություն եւ Ֆինանսներ

ԴՊՈ հասուկ ծառայությունը զբաղվել է նաև անօրինական սննդամթերքի գործունեությամբ, դրամառոթությամբ (տեղեկություններ են հավաքվել բոլոր գործարար մարդկանց մասին), կեղծ դրամի առևտրով: Ասեղծվել է ձեռնարկային բնույթ կրող մի շարք տնտեսական միավորներ, ինչպես «Արծուրի», Ֆինանս, «Բանաթ» կոոպերացիան, «Ասոդ» խանութը, «Տրես» լոգիստիկայի ընկերությունը եւ փոխադրական ծառայության Ֆինանս եւ այլն:

3. Միջազգային թմրաբիզնես

Հասուկ ծառայության եւ ընդհանրապես կուսակցության նյութական առաքելության հիմնական աղբյուրը, սակայն եղել է միջազգային թմրաբիզնեսը:

Ինչպես արդեն նշվեց, հանցավոր խմբի մոտ առգրավվել է շուրջ հինգ կիլոգրամ հերոին, որի շուկայական արժեքը կազմում է մոտ մեկ միլիոն դոլար:

Մի ֆանի ամին առաջ Բեյրութ-Երևան-Մոսկվա-ՄԱՆ երթուղում հայտնաբերվել է եւս 3.5 կգ. հերոին, որի մասին տեղյակ է դառնում Ամերիկայի Միացյալ Նահանգների հասուկ ծառայություններին: Հետախուզության ընթացքը ցույց է տալիս, որ այդ դեմքը նույնպես, հավանաբար, կապված է նույն հանցավոր խմբի գործունեության հետ, որովհետեւ բխում է նույն աղբյուրից:

Նշված երթուղով թմրաբիզնեսի իրականացման գործը գլխավորել է ՀՀ Դաժնակցության բյուրոյի անդամներից մեկը Բեյրութից:

Թմրաբիզնեսի գործում առայժմ հետախուզությանը դարձված է ԴՊՈ հասուկ ծառայության շատ անդամների մասնակցությունը, որոնցից վեցը ձերբակալված են, երկուսը՝ Մոսկվայում, չորսը՝ Երևանում:

Ստանություններ

Ամենահավորը, սակայն, այս ծառայության գործունեության մեջ ստանալու են ու երկարատև նախադասարարական ֆառաբանական ստանություններ են, որ վերջին երկու տարիների ընթացքում կազմակերպել են իրականացրել են հասուկ ծառայության մարտական խմբերը: Սա մի արտաոց դեմ է, ընդհանրապես ֆեռական դասնության մեջ, երբ հանցագործները, մարդաստանները այսֆան իրենց առաջնություն են բողոնում, այսֆան փաստաթղթեր: Ավելին, այս ստանությունների կազմակերպման, ծրագրավորման, հետախուզման եւ իրականացման վերաբերյալ կազմվում են գեկուցագրերի անբողջական թղթածրարներ:

Ես հիմա կներկայացնեմ երեք ստանության գործի ձեռնարկ գեկուցագրեր, մեկը հայտնի ստանություն է մանափանդ դաժնակցական քաղաքականներում ծանալված մի անձնավորության Գագիկ Սահակյանի, որը ահաբեկչության ենթարկվեց այս տարի մայիսի 2-ին իր տան առջև: Այդ գործը կրում է TOP-I ծածկագիրը...

... Սիա եւս մեկ ստանության գործ հայտնաբերված «ԴՊՈ» հասուկ ծառայության արխիվում, նորից ձեռագիր:

Գործողությունը կոչվել է «O2»: «O2» գործողության վերջին փուլը շատ հետաքննվել է: Ես այն կներկայացնեմ

անբողջությամբ: Գործողությանը մասնակցել են երեք մարտիկ, չորսուրդ ստանել է դրսում, իսկ հինգերորդը՝ «Նիվա» ավտոմեքենայի մեջ: «Երեկոյան կողմ զանգում են Զեռոբեց տուն («Զեռոբ» ծածկագիր է): Վերցնող չի լինում: Տղերը ենթադրում են, թե սենցիները հեռախոսը անջատել են, հավանաբար հանգիստ լինելու դասձառով: Համոզված լինելով, որ բնակարանում է թիրախը, որոշվում է անցնել գործողության: Գիշերվա 12:35-ին գործողության բոլոր մասնակիցները լինում են բեմադրափայլի քաղաքում: Օգտագործվող «Նիվայի» համարի վրա գեկուցվել էին խաղաֆարից դասրասված այլ համարներ: 12:40-ին քաղում են դուռը: Ներսից Զեռոբը ձայնում է: Տղերը ասում են, որ գործ ունենի ֆեգ հետ, եկել են լուծելու: Առաջ կինը կիսովին դուռը բաց է անում, տղերը կրկին հայտնում են, որ գործ ունենի, դու մեզ չես ծանալում, իսկ մենք ֆեգ ծանալում ենք: Բացում է դուռը, ու ներս են մտնում: Զեռոբին ասվում է, որ անհարմար է այս ժամին, երբ տանը մարդ կա, հարցեր լուծել, հետեւաբար առաջարկում են ներսի իջնել եւ հարցերը լուծել: Այնուհետեւ նախասենյակում գրույց է տեղի ունենում, խոսակցությունները շարունակվում են մինչեւ գիշերվա ժամը երեքը: Շուրջ մեկ ու կես ժամ: Զեռոբը այդ ընթացքում հաշի է ծխում, երբ արձանակի կոթով առաջին հարվածն է ստանում, նա սարսափահար գոռում է. «Ես ի՞նչ եմ արել, ես մեզ վատ բան չեմ արել»:

Այդ դրահին կինն է դուրս գալիս եւ զարհուրած ասում է ի՞նչ եք անում: Տղերը սկսում են կրակել: Օգտագործվում են երեք արձանակներ էլ: Զեռոբը գլխից ստանում է երկու-երեք փամփուռ, նույնքան էլ կինը: Մեացյալ փամփուռները տարածվում են թիրախների այլ մասերին: Ընդհանուր օգտագործվում է 12 փամփուռ: Լսվում է երեխայի լացը: Դուրս են գալիս առանց հարեւանների կողմից նկատվելու: Դուրս եկած դրահին մարտիկներից մեկը կոչում է մուսի դրան, բռնիչին, առաջ տղերը մղենում են «Նիվա», որը անջատված լույսերով հեռանում է դեմոյի վայրից»:

Գագիկ Սահակյանի ստանության կազմակերպմանը, հետախուզմանը եւ իրականացմանը մասնակցել է, առայժմ ըստ հետախուզության սվալների վեց հոգի, ամուսինների ստանությանը շարք հոգի: Զերբակալված են ստանություններում կասկածվողներից յոթը:

Հետախուզության ընթացքը, ինչպես եւ առգրավված արխիվի նյութերը լուրջ հիմք են տալիս նաև տեղեկու, որ նույն հանցավոր խմբի հետ են կապված նաև Զայասանի ՊԱԿ-ի նախկին նախագահ Մարիուս Յուզբաբյանի եւ Երևանի նախկին ֆաղաբալուսի Համբարձում Գալստյանի ստանությունները:

... Այստիսով, ինչ տարգվում է ՀՀ Դաժնակցության բյուրոյի որոշմամբ, բյուրոյի անդամներից մի խումբը զբաղվել է գաղտնի գործունեությամբ: Այս խումբը ունեցել է բյուրոյի ընդհանուր իրահանգը, որից հետո այն եւս հաճվեաու չի եղել ոչ բյուրոյին, ոչ կուսակցությանը: Այսինքն, ինչորմացիա չի ներկայացրել ոչ կատարծ գործողությունների, ոչ Ֆինանսական հաշիվների մասին»:

(ՀՀ նախագահի ելույթի վերոհիշյալ հասվածները հրատարակում ենք անփոփոխությամբ):

Նույն օրը ՀՀ նախագահի հրամանագրով կասեցվեց ՀՀԿ կուսակցության գործունեությունը Զայասանի Հանառայեսությունում: Թվում էր, որ դեռեւս 1991 թ. բացահայտված ՀՀԿ-Կա.Գե.Բե գաղտնի հարաբերությունների մասին փաստը սրափեցնելու է ՀՀԿ դեկլարության: Սակայն, ըստ երկվայրին ամեն գնով իջեկանության հասնելու «Դաժնակցական տեղը» իր հետ բերում է նորանոր անակնկալներ, մնում է ստասել բացահայտված նոր նյութերի»:

ՀՀ ՆԱԽԱԳԱՀ Լ. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

«ՀՅ Ռաշնակցության գործունեության ժամանակավորապես դադարեցնելու մասին»

Նկատի ունենալով,

որ «Հայ Յեղափոխական Ռաշնակցություն» հասարակական քաղաքական կազմակերպության ներսում ստեղծվել է գործել է պիսկորական կառուցվածքով ու ճյուղավորված ցանցով գաղտնի հետախույզ-կան ծառայություն:

որ այդ ծառայությունը Հայաստանում պահվել է հանրապետության ազգային անվտանգությանն առնչվող ռազմական և տնտեսական բնույթի հետախույզական աշխատանքով:

որ մասնակցել է միջազգային թմրաբիզնեսի Բելյուս-Երեւան-Մոսկվա այլ երկրներ երթուղու մշակմանն ու գործադրմանը:

որ ստեղծել է անօրինական տնտեսական կառույցներ և պահվել դրամաշրթնությամբ (ռեկետ),

որ կազմավորել է մարտական խմբեր և նրանց միջոցով իրականացրել բացահայտված քաղաքական սպանություններ ու ծրագրել մի շարք այլ ահաբեկչական գործողություններ,

որ իր ընդհատակյա գործունեության ընթացքում օգտագործել է «Հայ Յեղափոխական Ռաշնակցություն» և նրա դուստր կազմակերպությունների «Համազգային հայ կրթական և մշակութային միության», «Հայ օգնության խաչի», «Նիկոլ Աղբալյան ուսանողական միության» և «Հայ մարմնակրթական ընդհանուր միության» պաշտոնական կառույցները:

որ գաղտնի ծառայությունն ստեղծվել է «Հայ Յեղափոխական Ռաշնակցության» բարձրագույն մարմնի Բյուրոյի որոշմամբ և գործել Հայաստանի Կենտրոնական Կոմիտեի գիտությամբ:

որոշում են,

Նշված ծառայության հետագա հնարավոր անօրինական գործողությունները կանխելու, Հայաստանի Հանրապետության քաղաքացիների անվտանգությունն ապահովելու նպատակով ժամանակավորապես, մինչև օրենքով սահմանված կարգի հարյի լուծումը, դադարեցնել «Հայ Յեղափոխական Ռաշնակցություն» հասարակական քաղաքական կազմակերպության գործունեությունը:

ՀՀ Նախագահ

Լ. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ

28 դեկտեմբեր 1994 թ. քաղ. երեւան

Ուրուզվայի և Շվեդիայի հայերը լուսաբանում են

Ուրուզվայի և Շվեդիայի հայերը հատուկ նամակներով պաշտպանեցին Հայաստանում ՀՅՌ-ի գործունեության դադարեցումը. Ուրուզվաիայի նամակի մի բաժնում ասվում է. «... խոր ցաւով կը ճեղեկանանք որ հայ ժողովուրդի «փրկիչ» կազմակերպութիւնը՝ ՀՅՌ-ն, կրկին անգամ խնդրոյ առարկայ կը դարձնէ հայ ժողովուրդի և հայրենիքի աղաւթը»:

...Սփիւռահայ գաղութները ցաւ լաւ գիտեն, թէ աղէտներու առջեւ զգնուեցան վերոյիշեալ կուսակցութեան անհեռաճեւ և երբեմն նոյնիսկ ազգադաւ քաղաքականութեան լուսաբանութիւնը: Իբրեւ աղաւթոյց արժէ յիշել կուսակցութեան լուսաբանական գործունեութիւնը Սուրիոյ մէջ, 1961-ին, ... եկաւ արատաւորել ամբողջ Սուրիահայութեան վայելած բարձր վարկը...: Նոյնը լուսաբանեցաւ Եգիպտոսի և Եւրոպայի որոշ հիւրընկալ երկրներու մէջ, երբ կուսակցութիւնը չվարանեցաւ գործակցելու բուրժին և Գիթերական Գերմանիոյ ղեկավարներուն հետ:

... Այս բոլորին վրայ լուսաբանեալ Դաւանակցութեան անհանդուրժելի և լուսաբանելի քաղաքականութիւնը, որ կուգայ բռնանալու դարաւոր հայ եկեղեցւոյ վրայ, ամեն ինչով անարգանքի ենթարկելով անկողմնակալ ելել

ղեցականները և իր նուր ցահերուն ծառայեցնելով եկեղեցւոյ եկամուտը:

Ի հիման

1- Ռ.Ա.Կ. Վահան Թէքեան Ակումբ

2- Ս.Գ.Բ.Կ. Հայաստան Ակումբ

3- Հայ Ազգային Կեդրոն

4- Ռաշիոն Մոնթենիո-ի Ազգային

Յանձնախումբ

5- Մոնթենիո Գաղութային Ազգային

Յանձնախումբ

6- Մարաշի Հայրենակցական Միութիւն

7- Անանուսի Հայրենակցական Միութիւն

8- Թէքեան Ազգ. Միութիւն

9- Հայ Մարմնամարզական Միութիւն

10- Երեւան Ազգային Միութիւն

Իսկ հայ-շվեդական մշակութային կենտրոնի վարչության նամակում ի միջիայլոց գրվում է.

«Մոտիկից ծանաչելով և ծանոթ լինելով ՀՅՌ-ի ազգավաս գործելակերպին սփյուռքի տարածում և հիմա էլ Հայաստանում և Արցախում, Ձեր և Հայաստանի իւրաքանչիւր լուսաբանութեան որոշումը, երկրի անվանագրութիւնը աղաւթով և նուրազանքով, զգնում ենք բնական ու անհրաժեշտ»:

Լավագույն մաղթանքներով

Հայ-սվեդական

Ազգային կենտրոնի վարչություն

Ճզմածամ 337 ԵԱՐԲԵՐՈՒՄ

Կլինի՞ Գոր հեռացում ՀՅԳ ԵԱՐԲԵՐՈՒՄ

Դեռես անցած Եարաթ ԳԽ ՀՅԳ խմբակցության անդամներից մեկը անհարկել էր. թե անցած ուրաք օրը (25 հոյ.) ՀՅԳ ԵԱՐԲԵՐԻԳ ղիտի հեռացվեք կրվյալ հակակոմունիստական հայացմներով հայտնի. ՀՅԳ խմբակցության անդամ Ռաժիկ Ազգինյանը: Սակայն այդ օրը, Ռաժիկ Ազգինյանի բացակայության պատճառով, գործուրաքյուն անկատար էր մնացել:

ԳԽ ՀՅԳ խմբակցությանը մոտ կանգնած աղբյուրներից հայտնի դարձավ, որ այս Եարաթ, երեքալրի օրը, հոյեմների 29-ին սեղի անհցած ՀՅԳ խմբակցության նիստի ժամանակ նմարկվել է Ռաժիկ Ազգինյանի հեռացման հարցը: Սակայն այս անգամ ես հարցը բաց է մնացել, քանի որ նիստի անավարտ է մնացել «ամբաստնյալի» և «ամբաստանողների» միջև փոխադարձ հայեդյաններին ու ծագած փախուկի դասմառով: Ռաժիկ Ազգինյանը «կոմունիստներ, կԳԲ-ականներ» է անվանել նիստին ներկա գեմպլներին ու հեռացել:

Այսօր սեղի է անհանցում ՀՅԳ կենտրոնի նիստը, որտեղ նմարկվելու են կազմակերպչական հարցեր: Չի բացառվում, որ նիստի «արդյունավետ» լինի և իրականում քոյր այն կանխատեսումներն ու տոնկամները, այդ թվում և լրագրողների, որոնք կատված են այս հարցի ետ:

Ի դեղ, բա սեղեկությունների, Ռաժիկ Ազգինյանի հեռացման հարցը պետ է նմարկվեք և լուծվեք գեռեա կեն սարի առաջ, ՀՅԳ խմբակցության նախկին նախագահ Գուգիկ Հովհաննիսյանի հեռացման օրերին: *«Լրագր 2-12-94»*

ՀՅԳ Վերականգնումի Եարժումի Մաժիլ Ասուլիսը

Եարաթ, դեկտեմբերի 17-ին, Գլեկեյի (Լու Սնչքիս, ՍՄԿ) «Ռեղ Լայրն» հյուրանոցում սեղի է մնեցել ՀՅԳ Վերականգնումի Եարժումի հրադարակոյին առաջին մաժիլ ասուլիսը, որին մասնակցել են Եարժումն 5 դեկավար անդամներ՝ Հույ Թորիկյանի գլխավորալրաքյունը:

Մաժիլ ասուլիսին ներկա են եղել լու-անցելիատակը քերքերի և հեռուստատեղյուն կայանների մեծ քվավ ներկայացուցիչներ, այդ թվում Սոգլայ Դեմոկրատ Հնչակյան և Ռաժկավար-Ազատական կրավակցությունի դասեմաքերի՝ «Մալիս» և «Մար Օր»ի դասախախտումներ:

Ասուլիսի բացման խոսքն ասել է Չորջ Արեկյանը, որ ներկայացրել է Առժամյա Լիսագր Մարժնի անդամներին, որոնք բարտն է եղել են պլեկիմում: Դեկտեր Չուպեն Կիւակոյունն քերքեղ է Վերականգնումի Եարժումն դասեմական հայտարարալրաքյունը, որից ետս ՀՅԳ-ն վերածնելու և վերականգնելու Եարժումն ևս խաժեռակով վասակավար գործիչներ դրասախախտել են ներկաների հարցերին Եարժումն նոքասակների և հեսագա գործունեալրաքյուն վարաքեղալ:

«Հնչակ Հայաստանի 24-12-94»



Կանադայի դեկտրոյունը արգիկում է ՀՅԳ դեկավարոլրաքյան մոտեր կեղիք

ՀՅԳ անհանգեռելի դեմներ Մարոխյանից մինչեա Տանապիսյան և այլք, Կանադոյի կոյրմից որոյա «անկուկյալի անժ» մոտի վիզա չեն ոսմում «անարկեղալրաքյուն քերքեղեա» մեղալրումնով: ➔13

Վեց կուսակցություններ պաշտպանում են

Հայաստանի Հանրադեկությունում ախասող 6 կուսակցություններ համատեղ հայտարարալրաքյունը դաքաքեղանել են ՀՀԳ գործունեոլրաքյան ժամանակավոր դադարեցման մասին ՀՀ նախագահի հրամանագիրը: Դրանք են Հանրադեկական կուսակցոլրաքյանը (ՀՀԿ), Զիւստոնիա-ժողովրդավարները (ՀԶԺՍ), Հայոց Համագային Եարժումը (ՀՀԵ), Ռամկավար-ագառական (կիքեղալ-դեմոկրատական) կուսակցոլրաքյունը (ՌԱԿԴ), Սոցիալ-դեմոկրատ Հնչակյան կուսակցոլրաքյունը (ՍՀԿ), «Սավորական Հայաստան միությունը»:

ՀՈՍԿ-ը կհրամանակադես մերժում է ախարեկչությունը

Ռամկավար-ագառական կուսակցոլրաքյան վարչությունը չի ստորագրել: Հայ հեղափոխական դաքանակցոլրաքյան գործունեոլրաքյան ժամանակավոր դադարեցման մասին նախագահի հրամանագիրը դաքաքեղանող աքակողմնորոքման 6 կուսակցոլրաքյունների համատեղ հայտարարալրաքյունը:

Պարգարանման համար Մրմեմորքեաի թղթակիցը դիմեց Հայաստանի Ռամկավար-ագառական կուսակցոլրաքյան վարչոլրաքյան նախագահ Ռուքեն Միգախանյանին:

Ռ. Միգախանյանը Մրմեմորքեաի թղթակցին համադոտ

դասմեց վարչոլրաքյան ընդհանուր սրամադրոլրաքյան մասին: Վերջինս խորադես անհանգաքաքաժ է, որ ագային-ագառագրական դալարում անվիժելի ժառայություններ ունեցող առաքաքար փողափական կուսակցոլրաքյուններից մեկի կառոյցում գոյություն ունի գաղտնի կազմակերպություն, որի դաքաքականությունների մեջ են մտում ախարեկչական գործողությունները: Ռամկավար-ագառական կուսակցոլրաքյունը կհրականադես մերժում է ախարեկչությունը որդես փողափական դալարի ծե: Սմմիքական մեղավորներն անսարակոյս դեք է եքթարկվեն դասական խստագոյն դասախանասվոլրաքյան, դրանից թիող օրինական հեաքմեքով: «Նախագահի քերած փաստարկները բավականին ժանրակիող են, վերջում ասաց Ռուքեն Միգախանյանը, միանգամայն հասկանալի է նախագահի լուրջ անհանգաքությունը սեղծված քարղ իրավիժակում: Այնուամենայնիվ, նման որոքումը դեք է կայացներ գերագոյն դասարանը, ինչդես դա նախատեված է փողափական կուսակցոլրաքյունների մասին օրեմով, այլ ոչ թե փողափական հաստատությունները»:

Մնում է իլեքեցնել, որ նախագահի հրամանագրով ՀՀԿ հաստարակական-փողափական կազմակերպության գործունեությունը ժամանակավորադես դադարեցվել է նույն այղ դալամով: մինչեա օրեմով սահմանված կարգով հարցի լուծումը: Իսկ օրեմը նախատեված է կուսակցոլրաքյան գործունեոլրաքյան կասեցում կամ արգելում, ես առաջինի միջնորդոլրաքյան արդարադասությունն նախարարությունը դեռես սարեվերջին դիմել է գերագոյն դասարան:

«Հայր 9-12-94»

ԱՍԲԻՈՆ

Դեպ Արեւելքն Աստվածային

(Բ. Ծառ)

Գրաչ Ստեփանյան

Արեւմուտքի եւ արեւմտապաշտ հայերի քարոզչութիւնը հատկապես շեշտը դնում է հայերի եւ շրջակա ժողովուրդների տարբերութիւնների վրա, նույնիսկ բարձր պատիվ են անում հայերին նրանց համարելով որպէս «եվրոպական» մշակույթի կրողները Արեւելքում: Այնինչ իրականում մենք այստեղ Միջին Արեւելքում գոյատեւել ենք առավելապես շնորհիվ մեր արեւելյան մշակույթի: Այդ կապակցութեամբ Վահե Օշականը գրում է.

«Սխալ է՝ միայն եկեղեցով՝ կամ ազատութեան կիրքին վերադրել մեր գոյատեւումը դարերու ընթացքին:

Դիմացած ենք նաեւ շնորհիվ մեր «մշակութային ընտանիքին», որ որքան ալ տարօրինակ թվի այս օրերուն կը բաղկանար մեր դրացի երկիրներէն: Կենցաղային ու Ֆոլկլորային ինչ-ինչ հատկանիշներ, ժողովրդային երաժշտութեան ու նվագարաններու, գեղջուկ պարի եւ հասարակաց հատկանիշներ եղած են մեր եւ շուրջի ժողովուրդներուն միջեւ, որ շողախած են մեր ժողովուրդները, այլապէս անկարելի էր որ ամալութեան մեջ տոկայինք:

Մեծ եղած է՝ օրինակ, թիվը հայ աշուղներու, որոնք թուրքերն ալ երգած են, ինչպէս է պարագան Սայաթ Նովային: Կովկասեան մշակույթ մը կա, որուն մաս կազմած ենք հայերս: Եվ ասիկա կրոնական հավատքէն ավելի խորունկ մակարդակի վրա... Փարաջանօֆի ֆիլմերը՝ անուղղակի վկայութիւններն են այս իրողութեան»(11):

Մշակութային այդպիսի կապեր քիչ թե շատ ունեցել ենք մեր բոլոր հարեւանների հետ, օրինակ հայ-քրդական առնչութիւնների մասին Դերենիկ Դեմիրճեանը գրում է. «Մենք միասին ենք ապրել ոչ միայն հարչուր, երկու հարչուր տարի, ապրել ենք հապարավոր տարիներ... Կա հայ-քրդական երաժշտութիւն, հայ-քրդական ֆոլկլոր, հայ-քրդական կենցաղ»(12):

Հայերը ամենամոտ կապերը ունեցել են իրանական մշակույթի հետ: Շատ Մանուկ Աբեղյանի՝ «... պարսից կյանքի եւ գրականութեան ուսումնասիրութիւնը մեծապէս կարող է նպաստել նույնիսկ մեր կյանքի ուսումնասիրութեանը եւ մեր գրականութեան առաջադիմութեանը, քանի որ հայ ազնյութը սկզբից մինչեւ ներկա, թե ցեղակցութեամբ եւ թե պատմական կյանքով, կապված է եղել պարսից հետ»(13):

Այսպիսով, մեր շրջապատի մշակույթներին հաղորդակից լինելը կարելի է մեր իսկ ինքնութիւնը ճանաչելու համար, բայց դա անհրաժեշտ է մանավանդ Միջին Արեւելքում ապագա կերտելու տեսակետից: Կարելի է մասնավորապէս առավել ծանոթութիւնը պարսկերենի հետ, որը շրջանի ամենատարածված լեզուներից է եւ անտարակույս գալիքում մեծ դեր պիտի ունենա Միջին Արեւելքի տնտեսական եւ մշակութային կյանքում որպէս ընդհանուր հաղորդակցութեան լեզու:

Եվ քանի որ հայերը համենայն դեպս պիտի շարունակեն ապրել իրենց միջին-արեւելյան միջավայրում, անհետաձգելի անհրաժեշտութիւն է ուրեմն փոխադարձ մերձեցումը շրջանի ժողովուրդների, ներառյալ թուրք ժողովրդի հետ: Դարձյալ մեջբերենք Վ. Օշականից.

«Հայ եւ թուրք մտավորականներուն դերը վճռական կրնա ըլլալ այս ուղղութեամբ եթէ գալիք տասնամյակներուն անկեղծ ճիգ մը գործադրեն երկու մշակույթները, հայ եւ թուրք իրար մոտեցնելու, իրար ճանչցնելու եւ երկու ազգերուն միջեւ

Արեւմուտքի եւ արեւմտապաշտ հայերի քարոզչութիւնը հատկապես շեշտը դնում է հայերի եւ շրջակա ժողովուրդների տարբերութիւնների վրա, նույնիսկ բարձր պատիվ են անում հայերին՝ նրանց համարելով որպէս «եվրոպական» մշակույթի կրողները Արեւելքում: Այնինչ իրականում մենք այստեղ՝ Միջին Արեւելքում գոյատեւել ենք առավելապես շնորհիվ մեր արեւելյան մշակույթի:

ընական հաղորդակցութիւն մը ստեղծելու»:

«Եվ տեղը չէ խոսելու թուրքին ջարդարար բնագոյի մասին, եւ կամ իսլամ -քրիստոնէա հակառակութեան մասին, որովհետեւ ճիշտ այդ վիճակն է, որ պիտի փոխվի»(14):

Ի հարկէ, չենք իդեալականացնում Արեւելքը: Գիտենք, որ եղել են արեւելյան բռնատիրութիւններ, կոտորածներ, ավերածութիւններ: Բայց այդ բոլորը կատարելագործված եղանակով արել է նաեւ «քաղաքակիրթ» Արեւմուտքը: Փաստ է, որ Մեծ Եղեռնին հայերը ցուրտ գոհ գնացին որքան արեւելյան բռնատիրութեան, նույնքան էլ արեւմտյան քաղաքական խաղերին, հաշիվներին, սադրանքներին: Արեւելյան բարձր մշակույթների տեր ժողովուրդներին որպէս կիսավայրենիներ ներկայացնելը եղել է Արեւմուտքի հոգեբանական քարոզչութեան մնացուցիկ մասը: Բայց շատ հեռու անցալը գնալու կարիքը չկա իմանալու համար թե ով է առավել վայրենի: Հիշենք Հիթլերի մանա, Ֆաշիզմը, մարդկանց ողջակիզումը, հիշենք նաեւ եւրոպացի ֆուտրուլիստների սարքած արյան խրախճանքները: Թող մի պահ վերանա ոստիկանութեան շվաքը Արեւմուտքի քաղաքների վրայից, այնժամ իր ամբողջ հասակով կհառնի արեւմտյան քաղաքակրթութիւնը:

Այսպիսով, մեր շրջապատի մշակույթներին հաղորդակից լինելը կարելի է մեր իսկ ինքնութիւնը ճանաչելու համար, բայց դա անհրաժեշտ է մանավանդ Միջին Արեւելքում ապագա կերտելու տեսակետից:

Սակայն մենք էլ թող ծայրահեղորեն չդատենք: Մենք Արեւմուտքի մշակույթին թշնամի չենք պարզապէս ազգային արժանապատվութիւնից մղված դիմադրում ենք Արեւմուտքի մշակութային ներխուժմանը: Դարավոր հակառակորդը՝ Արեւմուտքը քեզ վրա իշխելու համար պորավոր մի արշավ է ձեռնարկել, ընդ որում ամեն ինչ անում է որպէսզի ինքը երես մշակութապէս առաջատար եւ դու ստորակայութեան քարոզչութի մեջ չընկնելու համար պարտավորվում ես ամեն կերպ պաշտպանել քո հոգեմտավոր աշխարհը, քո «հոգու հայրենիքը»: Այլապէս, շատ լավ տեսնում եւ ըստ արժանւոյն

գնահատում ենք գիտության եւ արվեստի նվաճումները Արեւմուտքում: Բայց ճիշտ հենց այդ նվաճումների մասին էլ մեզ անհաղորդ է պահում Արեւմուտքը: Այն «մշակույթը», որ նա հրամայում է մեզ արեւելքիներիս, դա արեւմտյան մշակույթի հիվանդագին, ալլասերող, հոգի ապականող «տաքանքն» է, որը հաճախ դատաւիտելու է հենց Արեւմուտքի առաջավոր մարդկանց կողմից: Ինչ վերաբերում է վարդապատ տեխնոլոգիային, ապա դա Արեւմուտքի մենաշնորհը չէ, այսօր այն կարող է փայլել Արեւմուտքում, վաղը՝ Նորանոր վարդապատ արձանագրել, ասենք, Հեռավոր Արեւելքում, իսկ հետագային՝ նաեւ այլ շրջաններում:

Թուրք պետությունը հանդես գալով պանթուրքիզմի գործադրողի դերում, միաժամանակ իրագործել է նաեւ Արեւմուտքի ու սիոնիզմի ծրագիրները: Իր այս դերի մեջ էլ Թուրքիո պետությունը մեր օրերում հանդիսանում է ամերիկա-սիոնիստական աշխարհակուլ հրեշի արյունոտ թաթը Արեւելքում:

Երբ խոսում ենք հայերի եւ շրջանի ժողովուրդների մերձեցման մասին, հարկ է տարբերել թուրք ժողովուրդը թուրք պետությունից ու պանթուրքիզմից: Ոչ պանթուրքական գաղափարախոսությունն է լիովին արեւելյան, եւ ո՛չ էլ մերօրյա թուրք պետական մեքենան: Պանթուրքիզմի գաղափարախոսությունը ստեղծվել է առավելաբար հրյա-սիոնիստների կողմից, քան թուրքերի, իսկ այնուհետեւ մշտապես քաջալերվել է դրսից Արեւմուտքից: Թուրք պետությունը հանդես գալով պանթուրքիզմի գործադրողի դերում, միաժամանակ իրագործել է նաեւ Արեւմուտքի ու սիոնիզմի ծրագիրները: Իր այս դերի մեջ էլ Թուրքիո պետությունը մեր օրերում հանդիսանում է ամերիկա-սիոնիստական աշխարհակուլ հրեշի արյունոտ թաթը Արեւելքում: Այդ հրեշն այսօր ծրագիրներ է որոճում միջին Արեւելքի ապագայի մասին եւ դրա հետ էլ անհա գործի է անցել Թուրքիան ու վերաթարծվել է պանթուրքիզմը: Ճիշտ է, «թրքական աշխարհը» միավորելու վերջերս գոր-

ծաղրված ծրագիրը չպսակվեց հաջողությամբ, բայց Արեւմուտքն եւ Թուրքիան հարմար առիթներով Նորից ու Նորից պիտի առաջ քաշեն պանթուրքիզմը: Որքան էլ պանթուրքիզմը անիրագործելի լինի կամ ժամանակավրեպ, համենայն դեպս պանթուրքական կրքերի բորբոքումը, Նախկինի նման, կարող է առաջ բերել բազում աղետներ ու եղեռնական դեպքեր: Այդ իսկ պատճառով այն քոլոր ժողովուրդներն ու երկրները, որոնք վտանգված են պանթուրքիզմով, առաջացնում են մեկ միասնական ճակատ: Այդ ճակատն այսօր ընդգրկում է ոչ միայն ասիական ժողովուրդներ ու երկրներ, այլեւ Եվրոպայի ծայրամասում գտնվող որոշ շրջաններ, ինչպես Հունաստանն ու Կիպրոսը: Այստեղ յուրահատուկ դիրք ունի Ռուսաստանը, Ռուսները, թե՛ աշխարհագրականորեն եւ թե՛ աշխարհապայքով ավելի մոտ են Արեւելքին, քան Արեւմուտքին: Պանթուրքական եւ սիոնա-ամերիկյան ռազմավարության նպատակներից մեկն էլ Ռուսաստանի թուլացումն ու քայքայումն է: Ռուսաստանն առայժմ խարխալում է Արեւելքի ու Արեւմուտքի միջեւ, բայց նրա ելքն է կանգնել Արեւելքի իր քնական դաշնակիցների կողքին՝ հասարակաց թշնամու դիմաց: Ի դեպ, ինչպես տեսնում ենք, ներկայումս հայ-ռուսական կապը ոչ թե կրոնական, այլ գերապանցապես ռազմավարական է: Նրանք ովքեր շեշտում են հայ-ռուսական քրիստոնեական միասնությունը, նախ դրանով խորթություն են առաջ բերում հայերի եւ շրջապատի միջեւ եւ երկրորդ այդպիսի հավատացյալները, ինչպես նախկինում, այսօր էլ հեշտությամբ կարող են քրիստոնյա Ռուսաստանը փոխարինել քրիստոնյա Արեւմուտքով եւ այնուհետեւ հավատք ընծայել արեւմտյան տերություններին:

(Վերջը հաջորդիվ)

- 11-Վահե Օշական, Հայությունը իր տագնապներով, Դրօշակ, 7 սպրիլի 1993
- 12-Կառլենե Չայանի, Հայ եւ ցուրդ ժողովրդների բարեկամության պատմությունից, Երեւան, 1965, էջ 97
- 13-Բ. Չուգասյան, Հայ-իրանական գրական առնչություններ, Երեւան, 1963, էջ 11-12
- 14-Վահե Օշական, Աշխարհի հողվածը

10-> **Ճգնաժամ ՀՀ-ում արժեքներում**

...Ինչպես ասվել է արդեն, ՀՀ-ում երբեւէ «կուսակցության գումարները» չի տվել Ա. Աբրահամյանին...

«ԵՐԿԻՐ», դեկտեմբերի 15

«Հայք» թերթի ղեկավարների 16-ի համարում լույս է տեսել ՀՅԴ քյուրդի 1993 թ. հունվարի 7-ի նիստի թիվ 19 (Ե-66) արձանագրությունը, քարտուղարի ստորագրության լուսապատճենով: Արձանագրությունն սկսվում է այսպես

«ՀՅԴ Բյուրոյի (երեւան) հերթական նիստը սկսվեց ժամը 18-ին «Նորք» ամսագրի խմբագրությունում: Ներկա էին ընկերներ Ռուբենը, Մասիսը, Վարդանը, Տիգրանը, ինչպես նաեւ Պարույրը: Ուշացումով եկավ նաեւ ընկ. Արոն»:

Օրակարգի 4-րդ կետի («Ֆինանսական հարցեր») վերաբերյալ արձանագրությունում ասված է.

«Ոնկեր Տիգրանը (անշուշտ օտարերկրյա քաղաքի Տիգրան Ճինպաշյանը, «Հ. Հ.» ծանոթացրեց անկա ֆինանսա-

Գ. Բագրատյանը կայցելի Իրան
 Հայաստանի եւ Իրանի ԻՀ պատվիրակութ-
 յունների միջեւ տեղի ունեցող բանակցութ-
 յուններում Համաձայնութիւն է ձեռք բերվել
 Հայաստանի վարչապետ Հրանտ Բագրատյանի
 Թեհրանի այցելիչ շտաբի ղեկավարին:

Այս մասին լրագրողներին Հայտնել են
 Հունվարի 11-ին, երկու երկրների Համագոր-
 ծակցութեան Հանձնաժողովի աշխատանքի ա-
 ռաջին օրը:

կան դժվարություններին

Աշոտի (անշուշտ որ Աշոտ Աբրահամյանի, «Հ. Հ.» կողմից դեռ չորս օր առաջ խոստացված դրամը չի ստացվել:

Որոշվեց.

ա. Ոնկեր Վալդիկին տալ երեք օր ժամանակ Աշոտից որոշակի գումար վերցնելու համար.

բ. Աշխատանքներ տանել աստիճանաբար, առանց առճակատման գնալու ողջ գումարը Աշոտից ետ վերցնելու ուղղու-
 թյամբ»:

ԻՐԱՆԱՐԱՅ ՂԵՍՔԵՐ

**ԾԱՆՈԹԱՍԱՆՔ
ՍԻՍՈՆ ԱՅՎԱԶՅԱՆԻ ՀԵՏ**

Ծնվել է 1944 թվին Բանդար Անզալիում:
Ավարել է
ա. «Թեհրան» համալսարանի գեղարվեստական Ֆակուլտետը մագիստրոսի (գերլիսանս) կոչումով 1352 (1973) թ.
բ. «Իսլամական ֆաղափակությունների մանաչունը» Փարիզի «Սորբոն» համալսարանում (մագիստրոս 1365 (1986) թվականներին):

գ. Գիտությունների դոկտորի կոչում է ստացել Փարիզի «Սորբոն» համալսարանի ճարտարադեզության եւ հնագիտության ֆակուլտետից 1358-62 (1979-83) թվականներին Ախաջել է

ա. «Թեհրան» համալսարանի գեղարվեստական ֆակուլտետի գիտական հանձնախմբում 1355-71 (1977-92) թվականներին:

բ. «Թեհրան» համալսարանի, գեղարվեստական ֆակուլտետի ճարտարադեզության ուսումնական խմբակի վարիչ, 1358-62 (1979-83) թվին:

գ. Փարիզում, Եվրոպական Դիսենյալանդի համալիդի մի մասի նախագծող ու շինարարության վերահսկիչ 1369-70 (1990-91) թվականներին:

դ. Թեհրանի «Էլվանե հաթթեբեթ» ճարտարադեզների գրասենյակի գլխավոր նախագծող 1370-72 (1991-93) թվականներին:

ե. Երկայունս զբաղեցնում է հետեւյալ դաստնները.
ա. «Թեհրան» համալսարանի գեղարվեստական ֆակուլտետում (ճարտարադեզության դասախոս):

բ. Նոյն ֆակուլտետի ճարտարադեզական մասնագիտական լուսանկարչության դասախոս:

գ. «Ազաս» համալսարանում կլասիկ երաժեշտության դասախոս: (կլասիկ կիթառ)

դ. Բարձրագույն ուսման եւ մինիստրության գեղարվեստական կոմիտեի անդամ:

ե. Բարձրագույն ուսման մինիստրության գերբերի գնահատման կոմիտեի անդամ:

զ. Գիտությունների մինիստրության գիտական բարձրագույն խորհրդատու, գեղարվեստի, ճարտարադեզության եւ ֆաղափաշական մասնաձյուղերում, դոկտորական ուսումնառջանի բարձրասիժման խորհրդատու:

է. «Ազաս» համալսարանի գեղարվեստական ֆակուլտետի մասնագիտական կոմիտեի անդամ:

ը. «Ազաս» համալսարանի գնահատման եւ որակավորման հանձնախմբի անդամ:

Սիս վերում հիւսվածն է ճարտարադեզ, երաժեշտագես, նկարիչ, եւ լուսանկարիչ Սիմոն Այվազյանը:

Նրա չափազանց արվեստաւեր ուստահայ մայրը, դեռ հինգ տարեկանից էր նրան սովորեցրել զբաղվել նկարչության եւ երաժեշտության վարժություններով, ընկալելով նրա սերն ու հակումը դեռի արվեստի աշխարհ:

Սիմոնին շատ էր դուր գալիս իր փոքրիկ զարմուքը, ինչու չէ նաեւ լուսանկարչական այն աղարատը, որով դարգեվաւրվել էր հոր կողմից, իսկ զույնի մասիսն ու նրանցով բոլորի վրա ձեւավորված նկարչությունները, փաստորեն, նում էին նրա ուղղվածությունը դեռի գեղարվեստական աշխարհ: Այս աղբյուրայնքը երեւի խոսուր դեր էր վերադաշված Սիմոնի մորը, որը նեցուկ հանդիսանալով որդուն, այդ բոլորից սեղծեց աշխատանքի այն ներդաշնակ դաշը, որով էր աղաիովեց նրա հաղաղաղիմությունն ու փաղլուն աղաղան:

Սիմոնը սկզբնական շրջանում, երաժեշտությունը սկսեց իննաշխատայնքը: Ակսեց զարմոնով, շարունակեց ման



դուինով եւ ավարեց կլասիկ կիթառով: Իսկ նրա նկարչությունների նախնական թեմաները ընտրվեցին սեփական տան տեսարաններից, իսկ բնության տեսարանները հավերժացան նրա լուսանկարներում:

Գերազանցիկ էր նա դրոյրջական շրջանում, սակայն նրա անխոնջ սերն ու տեւջանքը գեղարվեստական բնագավառներում, կանխեց նրա հաջողությունները դրոյրջական կյանքի վերջին տարիներում:

Ի վերջո, գեղարվեստական աշխատանքներին համընթաց ավարեց դրոյրջը, եւ հաջողությամբ դասկվեց բարձրագույն ուսման ընդունելության կննությունների նրա մասնակցությունը:

Բարձրագույն կրթության հեճ զուգընթաց, նա սկսեց նաեւ երաժեշտության գիտական կրթությունը, իր երաժեշտաւեր շրջադաշին փոխանցելով այն ինչ սովորում է, եւ մինչ օրս լրջորեն շարունակում է այդ սովորույթը, եւ ժամանակի սղությունն անգամ չի հաջողել կանխել նրա ուսուցման սերը, ուսի եւ հաճախ են լինում, երաժեշտական մասնավոր դասեր ստանալու դիմումները:

Պրն. Այվազյանը իր կյանքի եւ ուսման հաջողությունները, արդյունքն է համարում, աշխատանքի մեջ ունեցած իր հեշեղողականության եւ խիստ մեծ սիրո:

Նա համոզված է, որ արվեստը միջոց է, սեղծագործական կյանքի խորեքը ձեռն ձգելու համար, նա իր գեղարվեստական կյանքում, ներեւելում է բնության ամենագեղեցիկ երեւույթներից:

Նկարչական աաղարեզում նա ներկայանում է որդես ռեալիստ նկարիչ, եւ իր նկարչությունների անխոս շրջանակներում խոսուն դաիերը, տալիս է բնության գեղեցկությունն ու շունչը եւ ինչու չէ նաեւ ընթացող կյանքի երանդն ու աշխուժությունը, եւ այս բոլորը համատեղ հեճ չէ զսնել ամենուր:

Գուցե եւ այդ օրինաչափությամբ է, որ նրա համբաւը դուրս գալով նեղ շրջանակներից, դարձել է Իրանի համայն արվեստագեսների սեփականությունը:

Նրա նկարչությունները բազում անգամներ ցուցադրության են դրվել Թեհրանի գալերեաներում եւ մեկ անգամ էլ Փարիզում, հետեւյալ կարգով

- ա. «Ռեզա Արասի» թանգարանում 1358 (1979) թվին:
 - բ. «Ռեզա Արասի» թանգարանում 1359 (1980) թվին:
 - գ. «Սոլիվան» գալերեանում 1360 (1981) թվին:
 - դ. «Զեն» գալերեանում 1361 (1982) թվին:
 - ե. «Զեն» գալերեանում 1362 (1983) թվին:
 - զ. Մերձավոր արեւելի մշակութային կենտրոն Փարիզ, 1363 (1984) թվին:
 - է. «Կլասիկ» գալերեանում 1371 (1992) թվին:
 - ը. «Կլասիկ» գալերեանում 1372 (1993) թվին:
- Մասնակցել է նաեւ նկարչական 4 հավաքական ցուցահանդեսների
- ա. «Սեյիուն» գալերեանում 1371 (1992) թվին:
 - բ. «Նիվալարանի մշակութային տնում» 1371 (1992) թ.:

գ. Թեհրանի «Մարզանի» զբոսայգում 1371 (1992) ք.:
դ. Իրանի արվեստի եւ գրականության առաջին համա-
լուծար-ցուցահանդեսում 1371 (1992) քվին:

Այվազյանը լինելով նաեւ երաժշտագետ կլասիկ կի-
թառի մարզում, ունեցել է բազմաթիվ մենանվագներ եւ
դասական կիթառի ուսուցողական մեկ համերգ, որը տեղի
ունեցավ 1372 (1993) ք. հոկտեմբեր 15-17-ին «Ռուդաֆի»
սրահում: Նա ընդհանրադաս ունեցել է հետեւյալ աշխա-
տանքները երաժշտական աստղերգում.

ա. Համերգ (կլասիկ կիթառ) «Թեհրան» համալսարանի
գեղարվեստական Ֆակուլտետի սրահում 1345 (1966) ք.:

բ. Կլասիկ կիթառի ուսուցում «Թեհրան» համալսարանի
մշակույթի կենտրոնում 1346-51 (1967-72) քվին:

գ. Դուես կլասիկ կիթառ եւ ջութակ (մեծաբանի երեկո
նվիրված Փազանիին) «Թեհրան» համալսարանի գեղ-
արվեստի ֆակուլտետի սրահում 1347 (1968) քվին:

դ. Կլասիկ կիթառի եւ ջութակի համերգ իսլավական եկե-
ղեցում, Թեհրան 1347 (1968) քվին:

ե. Կլասիկ կիթառի ուսուցում «Թեհրան» երաժշտական
կոնսերվատորիայում 1353 (1974) քվին:

զ. Կլասիկ կիթառի ուսուցում «Թեհրան» համալսարանի
գեղարվեստական ֆակուլտետի երաժշտություն ուսուցող
հանձնախմբում 1338 (1959) քվին:

Երաժշտական աստղերգում եւս, նա չի բավարարվում
եղածով եւ նա որոշող հոգին զգում է ուսուցողական
նոր կառույցների եւ ձեւերի անհրաժեշտությունը, անմա-
կարդակ եւ աղավաղված երաժշտությունից խույս տալու
նորասկզբով:

Նա այս հարցին թե ինչպե՞ս կարելի է սիրեցնել դա-
սական որակյալ երաժշտությունը եւ աղահովել դրական
արդյունքները, այդ էլ այն իրավիճակում, որ դժբախտա-
բար առջեւից է գնում ռաբիսը եւ աղավաղված երա-
ժշտությունը, այսպես է դասասխանում. «Որակը բառե-
րով բացատրելը համարյա անկարելի բան է. բառերով
կարելի է միայն ձեռն «որակը» ծանաչելու ուղու այբու-
բենը, որի նախաբանն է մեր լսողությունը վարժեցնել
«լավը» լսելուն, լսելու սովորույթ դարձնել լսել եւ շատ
լսել հոչակալու երաժշտագետների կլասիկ ստեղծագոր-
ծությունները: Այլ ուղղությամբ, որ չհանդուրժի սխալ,
անորակ եւ ինֆուլյուն չունեցող երաժշտությունը, սա-
ցնցող իրականություն է, որ թեկուզ ոչ բոլորն են որ
կաշիսան այդ ուղղությամբ, սակայն եթե այդ
ուղղությամբ աղահովենք անգամ միջակ տղանով հաջո-
ղություն, դա ողջունելի է:

Պարզապես լիցի ստեղծել միջ երաժշտության լսելու
եւ տեսնելու առիթներ, լինեն կլասիկ երաժշտության հա-
մերգներ, եւ հեռուստատեսային ցուցադրություններ, այլ-
ադեպ հնարավոր չէ ներգրավել երիտասարդությանը, ուղ-
ղակի այն դասձառով, որ նա ելնելով իր սարիքից,
սիրում է ակտիվություն եւ փաստորեն դա գտնում է աղ-
վաղված եւ ոչ որակյալ երաժշտության մեջ: Ես հա-
մոզված եմ, որ նրան լիցի ներկայացնել երկունս էլ եւ
աղա ցուցումներ կատարել միջը ընտրելու եւ լուրջ
ուսումնասիրելով գնահատական տալու «լավին» եւ
«վատին»:

Պրն. Այվազյանը իր երաժշտական կյանքում եւս արձա-
նագրել է մեծ հաջողություններ, ինչու չէ նաեւ լուսա-
նկարչության եւ նկարչության աստղերգներում: Նա մինչ
այժմ շահել է

ա. Չորս ոսկյա շքանշաններ Իրանի համալսարանների
եւ բարձրագույն ուսման հաստատությունների երաժշտա-
կան մրցույթումներում 1345-48 (1966-69) քվին:

բ. Իրանի մշակույթի եւ արվեստի նախարարության լու-
սանկարչության կոնկուրսի առաջին մրցանակը 1353
(1974) քվին:

գ. Մադրիդի օտարագրի ուսանողների երաժշտական

(կիթառ) մրցույթումների իրավարար հանձնախմբի հասույ
մրցանակ 1354 (1975) քվին:

Նա, որդես հնագույն մեծ դեր է ունեցել Իրանի հյուսի-
սային քաղաքում գտնվող հայկական հին մասուրների եւ
վաների վերաշինության աշխատանքներում որն. Արմեն
Հախանազարյանի ընկերակցությամբ:

Պրն. Այվազյանին չի հաջողվել տեսնել Հայաստանը,
սակայն շատ լավ գիտի Հայաստանի մշակութային վերել-
լը եւ բարձր է գնահատում հայրենի մշակույթն ու արվես-
տը:

Մեր մյուս հարցին, թե ներկա ժայռանքները հազվի
առնելով ինչ հեռանկարներ կան, Իրանի արվեստի զար-
գացման կադրակցությամբ, եւս դասասխանում է.

«Ճարտարապետությունը, նկարչությունը եւ լուսանկար-
չությունը ծավալում են զարգացած գործընթաց եւ
առաջանում են համաշխարհային զարգացման հետ ներ-
դասնակ, այն աստղերգների մեր ուսանողները փորձում
են չզիջել ոչնչով եւ իրականացնել միջազգային չափա-
նիշներով համակարգ, այդ առընչությամբ մեծ դեր ունեն
առկա հրատարակությունները, միջազգային ցուցահանդե-
սները, համաշխարհային մասշտաբով ինֆորմացիայի
միջոց եւ արագ փոխանցման ոլորտը, դրանցով մեզ եւ
մեր ուսանողներին փոխանցվում է նոր տեղեկություններ,
նոր տեխնիկա եւ նոր ու զարգացած մակարդակ, մեր
ուսանողները այլեւս անցյալի դեպ դիտողի դերում հան-
դես չեն գալիս, նրանք իրենց ինֆորմույն աշխատանքնե-
րով ակտիվ մասնակցություն ունեն միջազգային կոն-
կուրսներում, մրցույթումներում եւ ցուցահանդեսներում:

Սակայն երաժշտությունը դեռ երկար ճամբա ունի կտրե-
լու եւ շատ գործ ունի կատարելու:

Այս տարի երկրորդ անգամը լինելով տեղի կունենա ե-
րաժշտական բարձրագույն ուսման ընդունելության ներու-
թյուններ, «Ազատ» համալսարանի միջոցով: Կուսանք ե-
րաժշտությունը եւս մեկը մյուսի հետեւից նվաճե՞լ զար-
գացման փուլերը իր մեջ ներգրավելով դասական երա-
ժշտության հետևող երիտասարդությանը»:


Իսկ երբ հարց է առաջանում թե երաժշտության եւ ընդ
հանրադաս արվեստի բնագավառում, որը լիցի առավել
արժեքներ է անհասկանալի բարձր ընդունակությունը, թե
սճնաբան աշխատանքն ու հետևողականությունը, անգամ
միջակ ընդունակությամբ, նա համոզում է, որ կարճուր-
դույնը սվյալ բնագավառում ունեցած սերն է, շատ է
դասահում, որ ընդունակները լինում են ծուլ, իսկ լից
չեն նրանք, որոնք չունեն բարձր ընդունակություն, սակայն
աշխատանք են եւ հետևողական: Երկրորդ խմբին դա-
սկանողները յուրացնելով սվյալ արվեստի տեխնիկան,
ունենում են ոչ դասական հաջողություն: Սակայն, որն,
Այվազյանը համոզված է, որ մեծ դեր է վերադասված
սեր կոչված այն հոգեկան աղբյուրին, որը ամենամեծ
ժարձառիթ է սովորելու եւ աշխատելու արվեստի աս-
տղերգում:

Պրն. Այվազյանը համոզված է, որ բոլոր արվեստները
լիցի սկսել միջ տեխնիկայով առաջին իսկ ֆայլերից, եւ
դա մնում է ուսուցչի ձկունության թե ինչպես կիրանցի
այն աշակերտին:

Գուցե այս համոզումը հետեւցնի այն եզրակացությունը
թե կոմիս եւ խստադասանք ուսուցիչ է որն, Այվազյանը
եւ ոչ մեղմ ու ներողամիտ, սակայն ինքը հավասարած է
ոչ կոմիս է եւ ոչ մեղմ, այլ ունի յուրահատուկ մի վար-
վելակերպ, որ աշակերտին ստիճում է լինել լուրջ եւ հե-
տևողական դասերով ինչ որ տարածություն իր ուսուցչի
հետ:

Պրն. Այվազյանը ցանկանում է շուտով Հայաստան մեկ
նել: Մադրում ենք բերադաս ժամօրհանություն եւ նորանոր
հաջողություններ իր կյանքի բոլոր աստղերգներում:

Լեռնիկ Լուսինյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺՄՄԱՆԱԿԱԿԻՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Յոթ Ցանկությունները Թռչունի


1. Քննի:
Երազի մեջ տեսնել մի կղզի:
Այնտեղ մի թռչուն
սպասում է ինձ:
2. Ջշիղվել նանապարհից
և սատղից չխարվել:
3. Իջնել աշխարհի
ցանկացած կետի վրա,
ունենալ տարածություն,
որ վերջ չունենա:
4. Խոսել ծառի հետ
և ասել նրան-
«Ես նույնպես ծառ եմ-
օդի մեջ բացված»:
5. Քաղաքի վրա
չմեռնել օդից:
6. Հատիկներ ունենալ:
7. Մի բոսի մարդ դառնալ
և նայել երկնում նախորդ թռչունին:

* * *

Չիմացի շնչի քթիկի սանիքին ցածի են
ագոսվներ
և նայում են ներքև: Պատահանից այն կողմ-
ծառեր,
որ խիզախորեն շնչում են մեքենաների
աշտանչած գազը և աղբում համառորեն:
Ի՞նչ անես՝ եթե չաղբես, կա՞ առդյո՞ք այլ
սարքերակ
այս աշխարհի հողի վրա աղբելու մի ողջ կյանք:
Ծառեր, մեքենաներ և շնչի սանիքից
ներքևի անցուղարձը հսկող ագոսվներ-
ես գանկացա իմ մեքի առջևից քայլել,
քայց ահա զննում եմ նրա հետևից: Չե՞ր հայացքի
թակ: Այսպես:

Գ
Ր
Ա
Կ
Ն

Գ
Ր
Ա
Կ
Ն



ԵՐԿՈՒ ՎԻՃԱԿ

Արեք խաղում է դեմիս վրա,
վազվզում ինչդեռ ճանճ,
փողոցը լողում է
մակընթացության մեջ ամուսն:

Ես հիշում եմ
մի ֆանի մանթրաներ (թարմգ,
սանսկրիտից), մտածում նրանց
երթյան մասին:

Ավաղ, ես Գիտուս չեմ,
ոչ էլ Բուդդա,
ոչ ո՞ր չեմ կարող կենդանություն տալ,
չեմ կարող սրբացնել
ոչ մի Մարիամ Մագրադինացու,
անգամ հիվանդ ձեռք չեմ կարող բուժել:

Մոտենում է մի մարդ,
խնդրում մի սիգարետ:
Ավաղ, ես չեմ ծխում:



Եվ սիրո, եւ փրկության,
 Եվ ողորմության
 Երբ երեխաները լաց են լինում-
 Իսկ չեմ ուրախանում,
 ավելին, ես տխրում եմ,
 երբ երեխաները լաց են լինում
 քարձրածայն կամ անձայն:

Երբ ծերերը լցվում են հիշողությամբ-
 Իսկ չեմ ուրախանում,
 ավելին, ես տխրում եմ,
 երբ ծերերը լցվում են հիշողությամբ
 Ինչպես անցյալին՝ ինչպես եկեղեցի:

Երբ սիրահարները խոսում են սիրո մասին-
 Իսկ չեմ ուրախանում,
 ավելին, ես տխրում եմ,
 երբ սիրահարները խոսում են սիրո մասին
 սերը բողած մի կողմ, ֆանի որ սերն այն է,
 ինչը անունն չունի:

Ձեռներովս մի պահ մագերս հարդարելով
 ես բնդառաջ եմ ելնում աշնանը
 (զի նրանն է երկրային Արեալությունը),
 լցված բերկրանով, տխրությամբ, հույսով,
 երբ պոետներին լարն է կտրվում-
 Իսկ չեմ ուրախանում,
 ավելին, ես տխրում եմ,
 երբ պոետների լարն է կտրվում,

ֆանի որ կյանքի լարը- Իսկ չեմ,
 Իսկ չեմ ֆրկության, Իսկ չեմ Ողորմածության-
 չափված է նրա վրա- այժմ եւ հավիտյան:

Վիճակն ու Եւրոպայում եմ ես
 բոլորիս Եւրոպայում,
 այն տունն եմ, ուր ամեն ժամ
 բաց է դուռն եւ տառուկան:

Չոր ֆառի երակի մեջ
 ես աչքուն տառուկան եմ լուռ
 այն ժողովի, որի առաջ
 անձրեւն է արձատրելու:

Ես կույր եմ, ինչպես նախկին
 Գիւրգալիս ամենաճեւս,
 եւ ձկան աչքերի մեջ
 Եւրոպայի ալիքն եմ ես:

Մի լաս եմ, հասած առջեմ
 Եւրոպայի ահեղ շնորհ,
 անցյալի հետքն եմ՝ կողմ
 կետորվա մաքուր դեմքին:

Դարերը անցնում են խուլ,
 մնում է վայրկյանն, ինչպես
 մի սփիւնքս անառաջում-
 այդ անձրեւ վայրկյանն եմ ես:

«Ո՞ւմ ես սպասում...»
 Աշունը թափում էր տերեւները
 ռոմանտիկ ոճով:
 Մի տղա կանգնած էր ցանկապատի մոտ
 քաղաքային այգու,
 ձեռքին սիգարետ եւ հագին թիկնոց:
 Ես նրան հարցրի- «Ո՞ւմ ես սպասում»
 - Իմ սիրած աղջկան:

Նստարանի վրա
 Նստած էր մի աղջիկ մագերս փռած
 կիսաբաց ուտերին,
 եւ ծառից պոկված մի քանի տերեւ
 համբուրում էին մագերս նրա:
 Ես նրան հարցրի- «Ո՞ւմ ես սպասում»
 - Իմ սիրած տղային:

Բացօթյա սրճարանում
 սեղանի շուրջը նստած էր մի մարդ,
 սեղանի վրա մի քանի լրագիր
 եւ մի բաժակ սուրճ:
 Ես նրան հարցրի- «Ո՞ւմ ես սպասում»,
 - ոչ ոքի, նստել եմ
 մինչեւ որն անցի:

Աշունը թափում էր տերեւները
 ռոմանտիկ ոճով:
 Օտարացած մի մարդ ու շ երեկոյան
 նստած էր այգու նստարանի վրա,
 եւ դեմքի վրա խաղում էր լույսը
 այգու լապտերի,
 ցույց տալով հետքերը ապրած օրերի:
 Ես նրան հարցրի- «Ո՞ւմ ես սպասում»,
 - սպասում եմ մահվան:

1966

**Եվ մեր բոքիկ ոտերը կմնան
 ժամանակի վրա**

Ժամանակն անցնում է
 արագ,
 ավելի, ավելի,
 ավելի արագ-
 մինչեւ աներեւույթ
 սահմանը մի աստղի,
 որ չի պտտվում
 եւ դառնում,
 եւ դառնում,
 եւ դառնում.

անշարժություն,
 ինչպես քար
 քառակուսի
 եւ կամ հենց այնպես,
 այսինքն՝ ավելի,
 ավելի,
 ավելի արագ.

ուր մենք այլեւս
 չենք կորցնի իրար
 կմնանք իրար հետ- ընդմիջտ,
 հավերժական,

եւ մեր բոքիկ ոտերը կմնան
 ժամանակի վրա-
 ոչ անիվ,
 ոչ սլաք,
 ինչպես արմատներ:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՎԱԾԸ ՊԱՏՄՎԱԾԸ ՊԱՏՄՎԱԾԸ ՊԱՏՄՎԱԾԸ ՊԱՏՄՎԱԾԸ ՊԱՏՄՎ

ԼՍՈՒՄ ԵՔ, ԳԱԼԻՍ Է...

Դանիել Բոլանժե

-Այս ի՞նչ օրն եք ընկել,- քայականչեց մորաքույր Պոլինը.- անձրեն էլ չի կտրվում: Չորապրեք վերաբերություն: Հենց նոր ասում էի ժողովին: «Ե՞րբ պետք է վերջապես խճապատես ճանապարհը»: Նա խոստացել է նաեւ մանրախիճ բերել ծառուղու համար: Հապա մի նայեք կոշիկներդ: Ի՞նչ վիճակում են: Ամեն ինչ նրա մեղքով է: Մրտում եք: Իմ փոքրիկ Դանիել, փայտ գցիր կրակին: Ինչքա՞ն ժամանակ է, որ ձեզ չեմ տեսել: Արդեն ութ օր է: Հենց որ գնացիք, սկսեց անձրեւ գալ: Ժողովը պնդում է, որ անցյալ տարի տասնվեց օր շարունակ անձրեւը չի կտրվել: Կարծում էի չափապանցնում է: Նա էլ ցույց տվեց օրացույցի վրա իր արած նշումները, ասելով, թե ես միշտ կասկածամիտ եմ եղել: Այս անգամ էլ ճիշտ դուրս եկավ: Նա շրջանակի մեջ է առնում անձրեւային օրերը: Իսկապես տասնըվեց, այս նույն օրերին, հոկտեմբերի կեսերին: Նա լավ է միայն թե հապում է: Օ՛, մեծ բան չէ, ինչքան նրան ճանաչում եմ, այդպես էր, միշտ էլ հապում էր: Դանիել, խնդրեմ, դու անցյալ շաբաթվա նման նրա առողջության մասին բան չասես: Ամբողջ գիշեր հոգիս հանեց. «Դու այլեւս եփուկ չես պատրաստում ինձ համար: Ինչ եղավ մեղքը: Զո հարբերը չեմ ուզում», եւ այսպես շարունակ: Վերեւ բարձրացեք եւ կտեսնեք, որ գիշերասեղանին դեղաջրով լի սրվակներ կան: Չի էլ խմում: Անընդհատ թարմացնում եմ, քայց ինչ օգուտ: Դե լավ, ուրիշ բանից խոսե՛ք: Իսկ գիտե՞ք, թե այսօր ինչ է բերել ինձ համար, սպիտակ սունկեր: Այս տարվա վերջին սունկերն են, եկեք տեսեք:

Մենք մորաքույր Պոլինի հետեւից մտանք խոհանոց, որի վարդագույն ապակյա պատերը կախարդական լապտեր էին հիշեցնում: Մորաքրոջ ուսերին գցված էր մինչեւ հատակը հասնող, խոշոր օղակներով շալ: Սենյակը լցված էր դալար փայտի բուրմունքով: Եղբայրս նկատեց, որ պատուհանի ապակին կոտրված է, եւ նրանից խնդրեց թուղթ, որպեսզի փակցնի, մինչեւ ապակեգործի գալը: Այնտեղից ցուրտ էր փչում, եւ փեղ կերը բորբոսով էին պատվել:

-Բան չկա,- ասաց Պոլինը,- անցյալ օրը ժողովը կտրեց, երբ ավելով ուզում էր սարդ սպանել: Չեմ հասկանում ինչու է վախենում սարդերից, նա, որ ոչ մի բանից վախ չունի: Ոչ, ոչ, փոքրիկս, ոչնչի ձեռք մի տուր: Նա ինձ ասաց, որ պետք է փոխի ապակին: Հենց դրա համար էլ դուրս է եկել, որ ապակեգործից վերցնի: Թող դաս լինի նրան, թող հասկանա, որ այդ միջատները միայն օգուտ են բերում վզվելի ճանճերին սպա-

նելով: Թեյ ուզո՞ւմ եք: Գիտե՞ք, կանգնած միտք էի անում, որ սարդերի նման մեր բուրդիս կյանքն էլ նույն օրենքին է ենթարկվում, որ մեր օրերը, մեր արժեքները թելից են կախված: Եվ հանկարծ ներս է մտնում ժողովը, հետեւիցս ձեռքերով փակում աչքերս ու հարցնում, թե ինքն ով է: Նրան կատաղացնելու համար (ինձ դուր չեն գալիս նրա այդ պինդորական կատակները), պատասխանում եմ Անրին է: Անրին նրա ընկերն է, որն ինձ հետ շատ սիրալիկ է, եւ դա ժողովին խենթացնում է Այս անգամ էլ հարվածը չվրիպեց: Խանդը դուրս ժայթքեց պողթկայ: Նա բաց թողեց աչքերս, բռնեց ուսերիցս եւ ստիպեց երդվել, որ իր քայակալությանը Անրին չի եկել: Խենթ է, խենթ, ասում եմ, չէ՞ Անրին երբեք այդպիսի բան իրեն թույլ չի տա: Նա չափից ավելի վախկոտ է, նրա տեղը ժողովը հարյուր անգամ ներս խցկված կլիներ: Այս ամենից ծիծաղս եկավ: Միայն իմ ծիծաղն է, որ նրան պինթափ է անում ժողովը ներողություն խնդրեց, համբուրեց ինձ, հետո այս սունկերով անակնկալը մատուցեց: Ուզո՞ւմ եք միասին ուտենք: Նա շուտով կգա: Ապակեգործները շատախոս չեն լինում: Մի փոքր կպրուցեն եւ վերջ: Դանիել, սեղանը գցիր: Ահա, լսո՞ւմ եք, գալիս է:

Լսվեց միջանցքի դռան ճռոցը: Պոչը տնկած, կամացուկ ներս մտավ կատուն, հայացք գցեց շուրջը, հետո եկավ փաթաթվեց մեր ոտքերին: Մենք նայեցինք Պոլինին, որը միանգամից մինչեւ ակաճները կարմրել էր: Հետո նա սկսեց երկար մեկ նայել մեկ բուրդիս նորից իրական ժամանակի մեջ պատկերացնելով, վերագտնելով հիշողությունը, մեկ էլ նորից մոռացության մեջ ընկնելով, չհասկանալով, որ խղճում ենք իրեն եւ կարեկցում իր վշտին, քեռի ժողովը մահացել էր երեսուն տարի առաջ:

Եղբայրս եւ ես կտրտեցինք սպիտակ սունկերը, որ մենք էինք բերել, ու նրա սիրած կերակուրը պատրաստեցինք: Պոլինը մեկ-մեկ խուճապի մատնվելով հարցնում էր, թե ինչն էր մտքից թռել: Մենք նրա հետ խոսում էինք միայն ժողով մասին, որը նորից կլանել էր նրա ողջ էությունը, ձեռքապատել նրան ամոթից ու անձկությունից, Ու երբ մանրիկ քայլերով մեկ հետ դուրս եկավ միջանցք, որպեսզի ճամփու գցի մինչեւ դուռը, խնդրեց ներել ամուսնուն, որը հարկ եղած պահին երբեք իր կողքին չի գտնվում եւ շատ է ափսոսալու, որ մեր այցելության ժամանակ տանը չի եղել:

ԱՐԱՔ

ՄԱՆԿԱ-ՊԱՏԱՆԵԿԱՆ ԷՁ

ՅՈՒՆԻԱՐ 1995 ԹԻՎ 69

(ԳԱՀԱՐՆ 1373)

ՊԱՅԾԱՍՈՒ
ՏՕՆԱԾԱՈՒ




Ի՛նչ պայծառ է ու գեղեցիկ
Տօնածառը այսօրւայ,
Մեր մանկական ջերմ սրտերից
Երգն է հնչում Նոր տարւայ:

Ջա՛ն, մեր ուրախ տօնածառ,
Ջա՛ն, հայրենիք մեր պայծառ:

Ձեր նոր տարին շնորհաւոր,
Հեռու, մօտիկ բարեկամ,
Տարիները թող գան բոլոր
Խաղաղութեամբ ընթանան:

Ջա՛ն, մեր ուրախ տօնածառ,
Ջա՛ն, հայրենիք մեր պայծառ:




ՀՆՈՐՀԱԽՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ



Նորից եկաւ մի նոր Տարի՝ 1995 թական, փաշուն տօնածառ, ճմեռ պապի, հաճելի նւէրներ, ուրախ հանդեսներ... Ինչ լա՛ւն են այս բոլորը:

Թող որ այս տարի ձեր կեանքի ամենալաւ տարիներից մէկը լինի, սիրելի երեխաներ՝ ժիր աղջիկներ, բաջ տղաներ եւ դուք ձեր մայրիկի ու հայրիկի, տատիկի ու պապիկի, բուրբերի ու եղբայրների եւ բոլոր-բոլոր հարազատների հետ միասին ունենաք ուրախ օրեր, հետաքրքիր նորութիւններ:



ԶՄԵՆ ՊԱՊԻՆ

Զմեռ պապին, Բուրբի հագին՝
Ուրախ-ուրախ, ձիւնաթաթախ,
Առած գրէր, խաղալիքներ,
Խնձոր, շամիչ, մտաւ դահլիճ:

Շնորհաւոր ձեր Նոր տարին,
Մաղթում եմ ձեզ ամէն բարին,
Ինձ մտա եկեք, դէ շուտ, այդպէս,
Որ նւէրներ բաժանեմ ձեզ:

Պատկերազարդ գիրքն այս սիրուն,
Նւիրում եմ Արմենուհուն,
Իսկ Բեգ, Սահակ՝ մի սաւառնակ,
Քեզ, Աշոտիկ՝ սիրուն ծիտիկ,
Իսկ Զօնիկին՝ այս փաշտէ ձին:

ՈՒ

ՆՈՐ ՏԱՐԻՆ

Նաւակն ո՛ւմ տամ. առ Բեգ, Արամ:
Բա լարովի կարմիր ատօն:
- Ինձ տուր, ինձ տուր, - ասաց Արտոն:
- Կը տամ, կը տամ, բայց զգուշ կաց,
Բակում վթար չտաս յանկարծ...

Այս թոչունն էլ, մանուկներ ջան,
Աղանին է խաղաղութեան...
Ճերմակաթե՛ք ժիր աղանին
Թուա նստեց տօնածառին:

Նւէրները հէնց բաժանեց,
Պապն էլ մեզ հետ երգեց, պարեց:
- Յտեսութի՛ւն, մնաք բարի,
Կրկին կը գամ եկող տարի...



Ներկիր Ըն Ցանկացած Գոյներով



ՄՐՑՈՒԹԻՒՆ

ՄՐՑՈՒԹԻՒՆ...

Մի քանի երեխաներ այն նախադասությունը լրացնելով, գրեք ձեր 5 սող: Յարկ է նշել, որ ամենալավ դասախանդներից 2 հոգի վիճակահանութեամբ կրճատեն եւ կըսանան գեղեցիկ ներքեր: Կը ցանկանայի, որ նոր տարին...




ԽԱՉԲԱՆՈՒ

Խաչբանը լրացնելուց յետոյ, նշանակւած տնակների տասերը միացնելով, կը գտնես նրա դադտնիքը:

- 1- Տօնաձառի զարդը
- 2- Երթալ
- 3- Հին շէ
- 4- Չեր ստուկերը
- 5- Մարդասպան
- 6- Բոյն հիստող կենդանի
- 7- Փլած տուն
- 8- Չի տեսնում
- 9- Գոյն է
- 10- Մարմնի մի մասը
- 11- Դուր տարի
- 12- Է գոմարած 1-ի
- 13- Փոքր տուն
- 14- Թաս
- 15- Չմեծ չին միլոգ
- 16- Մի քանի բայր

1	☆				
2		☆			
3		☆			
4				☆	
5			☆		
6		☆			
7		☆			
8		☆			
9					☆
10				☆	
11					☆
12		☆			
13	☆				
14		☆			
15			☆		
16				☆	



Ինչո՞ւ ենք փոշտում

Ջգո՛յշ: Փակիր բերանիդ առջեւը:

Երբ որեւէ անելորդ բան անցնում է ձեր քթի մէջ, դուք միանգամից փոշտում էք, որպէսզի ազատուէք դրանից:

Սիրելի երեխաներ բոլորիս քթի մէջ կան, նուրբ եւ մանր մազեր, որոնք մեր շնչած օդը մաքրում են փոշուց եւ պատճառ դառնում, որ մենք մաքուր օդ շնչենք:

Երբեմն այդ փոշին մնում է քթի նուրբ մազեր, վրայ եւ անգարում ձեզ, դուք այդ պահին փոշտում էք:

Ի հարկէ, երբ դուք մրսած էք լինում եւ տաքութիւն ունէք նոյնպէս փոշտում էք, այդ ժամանակ ձեր քիթը բորբոքւած է լինում:

Փոշտալը օգնում է ձեզ մաքրել քթի անցքը եւ շնչառութիւնը հեշտացնում: Ամէն անգամ երբ փոշտում էք, ձեր բերանից ու քթից բաւականին բակտրի է դուրս յորդում եւ հէնց այդ պատճառով էլ հարկատր է փոշտալու պահին թաշկինակով պահել բերանի եւ քթի առջեւը:




ԱՅ ՔԵՉ ՉՍԵՌ ՊԱՊ

ԴՐՈՒՆ ԸՄԻՆ Է,
ՉԻՆՆՔ ՍԱՌԵԼ Է,
ՓԱՅԻԼՆԵՐՈՎ ԼԻ
ԱՄՊՐ ԿԱԽԱԵԼ Է:

ԻՉՆՈՒՄ Է ՂԱՆՂԱՂ
ՉԻՆՆՔ ԿՏՈՒՐԻՆ
ԵՆ ԱՍՏՈՒՄ Է ՊՅԱՂ
ՄԵՐ ԺԻՆԵԼՈՅՉԻՆ:


ՎԱՌԱՐԱՆՆՔ ՂԵՌ
ՏԱՅՆՔ չԻ ՎԱՌԵԼ.
ՏԵՍ, ԺԻՆԵԼՈՅՉՈՒՄ Է
ՉՄԻՆ ՊՅԱՂ ՂԱՌԵԼ:

ԿՏՈՒՐԻՆ ԿԱՆՁԱՌ
ՆԱՅՈՒՄ Է ՎԵՐԵԼ,
ԱՄԵՐ ՈՆՑ ՉԱՅ ԳԱԾ՝
ՆԵՐ չԻ ՔԵՐԵԼ:



ԾԻՏԻԿԻ ՔՆՊԱԼԵՐ

Ցրտից սառած,
Մի բուռ դառած,
Մի խեղճ ծիտիկ,
Տօտիկ-տօտիկ
Գնաց կանգնեց մի տան դիմաց...
Լուսամուտը ծեծեց կամաց...
- Ո՛վ է...
- Ես եմ՝ մրսած ծիտս,
Ձեռից գնաց ոտս, բիթս...
Այսպես, այսպես,
Կարճ պատմեմ եմ՝
Որ նպաստեմ եմ՝
Ձիւն ու ձիւն է.



Վառ է ճտիս
Բրուսիւնը,
Թէեւ պարապ եւ չեմ նստել,
Բաց պաշար էլ չեմ պատրաստել,
Բարի մանկիկ,
Շատ եմ սոված,
Մի բուռ հատիկ,
Մի կտոր հաց...
Բ. Ղարիբեան





Գտիր իւրաքանչիւր
գույնը և անունը
թագցրած նւերը

Գտիր սխալները, որոնք թոյլ է տւել
ցրած ու անուշադիր շնիկը



ՆԿԱՐՈՒՄ ԵՆ ՄԱՆՈՒԿՆԵՐԸ



Թանիա Թահմասեան 8 տարեկան Շահին Շահր




Արփա Քեզեան 5 տարեկան Սասուն մանկապարտեզ

Արարատ Եարիջանեան 6 տարեկան Արեւ մանկամտօր



Լուսինե Շաղուլեան 5 տարեկան -Շւեղիա-



Լիլիթ Շաղուլեան 9 տարեկան -Շւեղիա-



Ի ՐԱՆԱՀԱՅ ԳՐԱԿԱՆ ԿՅԱՆՔԻՑ

ՔԱՄԵՍԱԿՆԵՐ

Գայանե Արգարյան



Ողողի՛ր հոգիդ շողերով հույսի,
եվ շյուղերով այդ հավասեղ հյուսիք,
Այդ հյուսեով կապի՛ր սիրո մի կամար
եվ այն թալիսման դարձում քեզ համար:

Անհայտ մի կարոտ
թախիժով շաղվել,
Եկջ ու ... անձայն
Սրտիս է թառել:

Կուզեմ՝ ամեն մահակնացու, որ շունչ ունի
Իր այսօրը լցնի մեկ ուրիշի օրով,
Կյանքի սերմանի գեթ մեկի մեջ ծնի գորով,
Վաղվա քաղցը հազեցնի այս օրվա քարով...

Օրերը ուրախ ժպտ են անց կենում,
եվ խոք եմ գգում թխուրդ կյանքի,
Ժամերը այնպես միասառ են, լուռ,
Որ գրեզում է կաթիլն արցունքի,
Ռոպեներն ասես մի-մի թակված դուռ՝
Վանում են՝ ծանում քերկրանքը կյանքի,
Վայրկյան ծննչալի, կանգ առ, ես դառի՛ր,
Փոխի՛ր ընթացքը այս անդուռ դարի...

Ես քեզ չեմ սիրում

Բայց ինչո՞ւ արդյո՞ք մարդկանց աչքերում
Միշտ քեզ եմ տեսնում:
Ես քեզ չեմ սիրում,
Բայց ինչո՞ւ արդյո՞ք մայքով անցնելիս,
Միշտ քեզ եմ փնտրում:
Ես քեզ չեմ սիրում, բայց ինչո՞ւ արդյո՞ք
Միշտ քեզ եմ ուզում ու քեզ հրազում,
Միշտ քեզ եմ հիշում ու քեզ կարոտում...
Գուցե իրո՞ք ես քեզ սիրում եմ,
Օ՛ր ներիր, ներիր, ինչի՞ց եմ խոսում,
Զե՞- որ արդեն իսկ
Ես քեզ չեմ սիրում:

չուն

Աշուն է,
Ու իմ ներսում, նույնպես տերեւաթափ եղավ,

Ու տերեւներս դալուկ, տխրադեմ
Ինձանից այնքան հեռու ընկան,
Որ մոռանում եմ ես,
Թե ճյուղիս կախված տերեւ է եղել,
սկայն, ցավում է պոկված տեղերը,
Վ վերստին ինձ հիշեցնել տալիս
Իրենց տխրադեմ, տարտամ օրերը...

Աշուն է,
Ու իմ ներսում, նույնպես տերեւաթափ եղավ:

Լեանիկ Լուսինյան

Գիտես արդյո՞ք թի ինչպես է մեկը
հանկարծ փլվում և մեջ
Թի ինչպի՞ս է սրտիդ խորքում դատարկություն
տիրում հանկարծ,
Թի չգիտես թող քեզ մաղթեմ՝ հորեք
չսպրես դատարկություն
Կամ չտեսնես ինչ, որ բանի կամ ինչ որ
մեկ մարդ անհատի փուլզումը՝
Նախ եւ առաջ իր մեջ
հետո ուրիշների:

Դու ասացիր, որ անկեղծ ես՝
բայց կեղծեցիր,
Դու ասացիր, որ անմեղ ես՝
մեղք գործեցիր,
Դու ասացիր, որ սիրում ես՝
բայց ատեցիր,
Իսկ ես ոչինչ
չասացի ու
լուկ սիրեցի:

ՃԱՆԱԶԵՆՔ ՄԵՐ ԵՐԵՒԱՅԻՆ

ՀԵՔԻԱԹ

Լինում է, չի լինում, մի աքլոր է լինում: Էս աքլորը բուժուջ անելիս մի ոսկի է գտնում: Կտուրն է բարձրանում. ձեն է տալի:

«Մուղրուղու, փող եմ գտել...»

Թագավորը լսում է, իր նապիր-վեպիրին հրամայում է գնան իջեն, բերեն:

«Անհաղթ աքլորը»

Լինում է, չի լինում: Լինում է մի թագավոր ունենում է երկու որդի, մինը բարի, մյուսը չար: Բարին լինում է մեծն ու ժառանգը: Էս բանը դուր չի գալիս չար եղբորը, մտածում է մի կերպով ապատվի բարի եղբորից, որ ժամանակին ինքը թագավոր դառնա:

Մի օր ասում է...

«Մարդակեր աղջիկն ու խորհրդավոր վարպետը»

Լինում է, չի լինում...

Բացվիր Սեզամի նման, կախարդական բառեր են, որ մեզ տանում են մի այլ աշխարհ, որտեղ պայքարում են բարին ու չարը, գեղեցիկն ու տգեղը, վեհն ու ստորը, ուժեղն ու թույլը... Եւ այդ աշխարհում հաղթում է միշտ բարին, գեղեցիկը, վեհը, ուժեղը, որտեղ չարին, տգեղին, ստորին ու թույլին տեղ չկա:

Գեղեցիկ մի աշխարհ, որտեղ անհնարը հնարավոր է դառնում, անիրականալիս իրականալի, ձին թռչում է, ծառը խոտում, սարը բացվում է եւ մարդը քարանում: Մի աշխարհ, որտեղ դու ապատ ես քո ցանկացածը իրականացնել ու տեսնել, որտեղ ոչ մի արգելք չկա, նստած քո՞ հրեղեն ձիու թամբին թռչում ես դեպի անհայտները եւ փնտրում կյանքի գաղտնիքները:

Այսպիսի մի աշխարհ են ունեցել նաեւ մեր պապերն ու նախապապերը եւ սերնդե-սերունդ փոխանցել են այդ խորհրդավոր աշխարհի բանալին, մինչեւ հասել է մեզ, սակայն ինչ ենք արել մենք այդ բանալին, արդյո՞ք հանձնել ենք մեր երեխաներին:

Մի գուցե ոմանց ժիծաղելի թվա այս տողերը: 20-րդ դար ու հեքիաթ:

Ես կասեմ այդ, մենք հիմա ավելի քան երբեք կարիք ունենք հեքիաթների, մեր հոգին ապնվացնելու, մարդկային հատկանիշներով լիցքավորելու համար:

Ո՞ր է մեր հերոսը, որ յոթ գլխանի դեռի հետ կռվում էր, իսկ հիմա մի գլխանու առաջ ծնկի է ընկնում:

Հեքիաթը մեզ մղում է դեպի բարձր իդեալները՝ բարին, վեհը, գեղեցիկը...

Հեքիաթը ստեղծել է մարդը, որ իրեն ապահով պզա եւ լավատես դեպի գալիքը:

Իսկապես էլ այդպես է, հեքիաթը կարողալիս, մարդու մեջ արթնանում է բարի պգայմունքներ եւ հուսադրում մարդուն, որ վաղը լավ կլինի, այդպես է նաեւ երեխաների մոտ:

Հեքիաթը մանուկի ամենահաճելի դաստիարակն է: Նրանից սովորում է բարությունը, մարդասիրությունը, ավնվությունը,



ընկերասիրությունը... մի խոսքով այն ամենը ինչ մարդկային է, հատուկ է մարդուն:

Հեքիաթի հերոսները երեխայի համար դառնում են կուռքեր (դժբախտաբար հիմա կինոյի աստղերն են կուռքեր դառնում, այն էլ քայսասական կերպարները), երեխան ցանկանում է նմանվել նրանց, լինել նրանց պես՝ բարի, քաջ, ավնիվ, խելացի եւ...:

Հեքիաթում հերոսը հաղթում է բոլոր դժվարությունները եւ հասնում իր նպատակին դա ոգեւորում է երեխային, որ համբերող լինի եւ հետեւողական: Նա հերոսի հետ միասին հաղթում է սպիտակ դեւին եւ սպասում ծաղիկին, որ աշխարհը առանց ծաղիկ չլինա:

Բարության, սիրո եւ կարեկցանքի սերմերը երեխայի ծնված օրվանից ծիլ են տալիս նրա ներաշխարհում, մենք պետք է դրանց համար ստեղծենք բարենպաստ պայմաններ՝ բերքառատ հող, ջուր ու արեւ, թե ոչ այդ ծիլը ծաղկի փոխարեն փուշ կդառնա, որ նախ եւ առաջ մեր աչքը կծակի:

Հեքիաթ պատմենք մեր փոքրիկի համար: Նրան ծանոթացնենք այդ հրաշալի աշխարհի հետ: Ինձ չի թվում գտնենք մի երեխա, որ հեքիաթ չսիրի: Գիշերները թող մեր երեխան հեքիաթով քնի, ոչ թե հեռուստացույցից ցուցադրվող ֆիլմի վայրագություններով ու սպանություններով, դուք կպզաք տարբերությունը:

Չմոռանամ նշել, որ հեքիաթը պարկ է տալիս երեխայի երեակայությանը, մանավանդ նախադարձական շրջանում (3-6 տարեկանում): Երեխան սկսում է ստեղծագործել: Նա դառնում է նավաստի եւ ծովում նավը փրկում փոթորիկից, դառնում է տիեզերագնաց եւ գտնում նոր մոլորակներ: Դառնում է բժիշկ եւ բուժում բոլոր հիվանդներին: Դառնում է քաջ պիևվոր եւ հալոնները պաշտպանում թշնամիներից: Դառնում է մարդ, որ անկումից փրկի մեր այս փոքրիկ մոլորակը:

Չխանգարենք նրան, երբ նա երեակայական աշխարհում է այլ օգնենք ավելի բովանդակալից դարձնելու այդ աշխարհը եւ կապ ստեղծել իրական աշխարհի հետ:

Լինում է, չի լինում...

Արսինե Արրահամյան

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Հայկական
դասվիրակության
հանդիպումը
հեղափոխության
առաջնորդ
Մեծարզո
Այաթ. Խամենեյիի հետ



Իսլ. հեղափոխության առաջնորդ Այաթ. Խամենեյին Նոր Տարվա առիթով դեյ 12-ին (հունվարի 2) ընդունեց Արտակ Արք. Մանուկյանի գլխավորությամբ հայկական պատվիրակությունը:

Այաթ. Խամենեյին շնորհավորեց Հ. Զրիստոսի Ս. Ծնունդը եւ Նոր Տարին, մաղթելով որ գալիք տարին բարիքներով լի տարի լինի Զրիստոսի իսկական հետեւորդների համար:

Արտակ Արք Մանուկյանը Չոմհուրի Իսլամի լրատվության հետ երեքշաբթի օրն ունեցած մի հարցազրույցում, շնորհավորելով նոր տարին եւ Հ. Զրիստոսի Ս. Ծնունդն, ասաց. «Ամանորչա իմ ցանկությունն է, որ բոլոր ազգերի միջեւ խաղաղություն եւ պետությունների միջեւ փոխհասկացություն հաստատվի»:

Նա իր խոսքերի այլ բաժնում ասաց. «Զրիստոնեական Նոր տարին, լավ հանգամանք է, որպեսզի ամեն ոք, իր կյանքի հոգեւոր արժեքը ըմբռնի եւ կատարի Աստծո առջեւ ունեցած իր պարտականությունները»:

Նա ավելացրեց. «Թեկուպ հայերը, որպես կրոնական փոքրամասնություն են ճանաչված Իրանում, սակայն Նրանք ունեն իրենց բոլոր իրավունքները եւ ամուսնության, ամուսնալուծության, կտակագրի ժառանգությունն եւ այլ հարցերում առաջնորդվում են իրենց կանոններով»:

Հայկական եկեղեցիները, Հ. Զրիստոսի Ս. Ծննդյան արարողությունը կատարում են 16 դեյ-ին (հունվար 6), իսկ Նոր Տարին տոնում դեկտեմբերի 31-ին (10 դեյ):

Սրբապանը իր խոսքերի ավարտին ասաց «Իրանահայերը իրանցի համայնքին եւ անձնական բոլոր իրավունքները ունեն եւ մենք հերքում ենք թշնամիների սուտ քարոզչությունները»:

Հանրապետության նախագահ

Տարուկները եւ չարաշահողները պետք է
հեռացվեն արդյունաբերության, բախշման
եւ սպառման շղթայից

Իրանի իսլ. հանր. նախագահ՝ Հոջ. Հաշեմի Ռաֆի-սանջանին ասաց. «Տարուկները եւ չարաշահողները պետք է հեռացվեն արդյունաբերության, բախշման եւ սպառման շղթայից»:

Նա ավելացրեց. «Նախկինում՝ եւս արտադրությունը դրական կետեր է ունեցել սակայն այսօր համաշխարհային ճարտարվեստի զարգացման հետ գույզընթաց պետք է մեր արդյունաբերությունը նույնպես զարգանա»:

Պրն. Ռաֆիսանջանին իր խոսքերը շարունակելով ասաց. «Մենք արդյունաբերության հարցում արդեն իսկ դժվարություններ չունենք: Այս համակարգում միայն պետք է արդյունաբերողին եւ սպառողին վստահություններ չենք, որպեսզի միջնորդները չկարողանան կեղծ լուրեր տարածելով շուկայի գները բարձրացնել»: Նա ավելացրեց. «Ընդհանուր առմամբ տնտեսության համակարգում բախշումը արդյունաբերության լրացուցիչ մասն է, եւ արդյունաբերությունը իր հերթին տնտեսության

հիմքն է կազմում: Առաջին հնգամյա ծրագրում այդ արդյունաբերության կարգավորման են մշակվել որով եւ ավելի ենք մոտենում ծրագրեր մեր նպատակներին»:

Հ. նախագահը իր խոսքերի այլ բաժնում ասաց. «Այսօր հողագործության ասպարեզում նույնպես վերացել են արգելիքները՝ հողերի քարելավման, ոռոգման ջրի հունավորման եւ հողագործների ուղղությամբ կարիքները հոգալով դրական ֆայլեր են արվել»:

Նա ավելացրեց. «Հումքի պղնձի, պողպատի եւ կապարի արդյունաբերությունը երկրում, հատկանշանական մի աշխատանք է եղել, որը ապահովելու է ճարտարվեստի կարիքները»:

Հ. նախագահը ավելացրեց. «Շղթայած հանրախանութների կառուցումը մի միջոց է, որը կիրառվում է տարբեր երկրներում եւ որոնց միջոցով հնարավոր է հեշտությամբ ապրանքները բաժանել ժողովրդի մեջ»:

Հոջ. Ռաֆիսանջանին իր խոսքերի ավարտին համայն աշխարհիի ֆրիստոնյաներից պահեցեց որպեսզի չմոռանան Հ. Զրիստոսի ուսուցում հակամշակութայնությունը:

ՏԵՂՍԿԱՆ ԼՈՒՐԵ

**Հանրադատության նախագահ.
«Անկասկած, դերգորավար
Սաթթարին եւ օդուժի այլ
նահատակ հրամանատարների
նշանակալի դերը,
8 ամյա հեռուստական
դաժժանության քննադատում
չի մոռացվել»:**

Դերգորավար Սաթթարին եւ նրան ուղեկցող օդուժի այլ հրամանատարները, 2 ժամ տեւողությամբ իջեւանեցին Իսֆահանի օդուժի կենտրոններից մեկում, եւ ներկա եղան օդաչվական ճյուղի ուսանողների ավարտական ծրագրին որից հետո ժամը 2.40-ին նրանց թռիչքը բարձրարավ Իսֆահանի օդակայանից: Երբ արդեն օդանավը 2000 բարձրության վրա էր գտնում, օդաչուն տեղեկացրեց, որ օդանավի ներքին օդի ճնշման փոփոխության պատճառով հարկ է շտապ վայրէջք կատարել, սակայն դժբախտաբար շտապ վայրէջքի պահին, օդանավը հրո ճարկ դարձավ:

Այս օդաչին վթարի նահատակների անվանացանկը հետեւյալն է՝ Ալիոեպա Եասինի, Մոսթաֆա Արդեստանի, Ահմադ Շոջաիի, Հասան Ռապադի, Բահրամ Շարիֆի, Հուսեյն Ջամշիդ, Ռեզա Ջամ Մանեշ, Ահմադ Ռեզա Սարդարաբադի, Մոհամադ Ռեզա Մոհսենի, Աբաս Մոհթաշամի եւ Եուսեֆ Փուրպադի:




Իսլ. հեղափոխության առաջնորդ Ալյաթ. Խամենեիի ձեռնարկության, օդուժի նահատակների մեծարման համար Մոթահարի դպրոցում մի հանդիսություն կազմակերպվեց

Սույն հանդիսությանը մասնակցեցին հանր. նախագահը, հեղ. առաջնորդի գրասենյակի պետ, բարձրագույն ատյանի նախագահը, արդարադատության ուժի նախագահը պահապան խորհրդի մի քանի անդամներից, Իրանի իսլ. բանակի միացյալ ուժերի նախագահը, բանակի մի շարք հրամանատարները եւ թեհրանում բնակվող այլ երկրների դեսպանների պիևվորական կցորդները:

Ազակիր ժողովուրդը չոպուններով ցավակցեց հեղ. առաջնորդի կրած ցավալի կորուստը: Իսլ. առաջնորդի ներկայացուցիչ՝ ազգային ապահովության խորհրդում պրն. Ռոհանին, սույն հավաքում ասաց. «Իրանի իսլ. հանր. օդուժը, պատերազմի եւ վերակառուցման շրջանում ծանր պարտականություն է ունեցել եւ նահատակ հրամանատարները համարվում են մեր վարչակարգի պարծանքը»:

Պրն. Ռոհանին այսպես շարունակեց. «Նահատակ Սաթթարին իր 9 ամյա հրամանատարության շրջանում հարյուրավոր ուսումնասիրական նախագծեր է գործադրել եւ նրա գործադրված որոշ նախագծերը օդաչին պաշտպանության մարզում, հասվագչուտ են եղել անգամ աշխարհի վարգապած երկրներում»:



Օդուժի ընդհանուր հրամանատար նահատակ դերգորավար Սաթթարի




Նահատակ դերգորավար Ռապադի, Եասինի, Արդեսթանի, Շոջաի

**Խորհրդարանի որոշմամբ
Արբանյակներից հեռուստահաղորդումներ ընդունող
սարքավորումների օգտագործումը արգելվեց**

Արբանյակների օգտագործումը եւ դրան հետեւող հասարակական-մշակութային եւ ազգային վնասները, իսլ. խորհրդարանում բազմաթիվ վեճերի առարկա դարձան եւ վերջապես խորհրդարանը արբանյակների սարքավորումների օգտագործության արգելման նախագիծը հաստատեց:

Սույն նախագիծը վերջին հաստատման համար, տրվեց Պահապան խորհրդին, որի հաստատման դեպքում արբանյակները եւ դրանց սարքավորումները օգտագործող անձիք հանցագործ են համարվելու ու տուգանքի եւ պատարկման կենթարկվելին:

Սակայն այս օրենքի հաստատման դեպքում, պետք է հեռուստատեսության ծրագրերը հարստանան, որպեսզի առնելիք դատարկության տեղ մարդիկ արժեքավոր ծրագիր դիտորդը դառնան եւ այսպիսով դեպի իրենց ազգային հարապատ արժեքները վերադառնան, հակառակ դեպքում այս օրենքը հաջող արդյունք չի ունենալու:



ՏԵՂՍԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Ամերիկայի եւ Իսրայելի սղառնալիքներով հանդերձ Բուեեհրի ասոմակայանը համալրվելու է

Ամերիկայի դաշնային Գերատեսչության նախարար ասաց. «Վաշինգտոնը համաձայն չէ Ռուսաստանի օգնությանը Իրանի ասոմակայանը համալրելու հարցում»:

Իրանի միջուկային հաստատությունների համալրում Եւրոպայում արգելող Ամերիկայի եւ սինդիկատական ռեժիմի սղառնալիքներին հակառակ Իրանի կառավարական մարմինները հաստատում են Ռուսաստանի համագործակցությանը վերսկսել Բուեեհրի ասոմակայանի Եւրոպայում գործունեությունը: Բուեեհրի ասոմակայանի Եւրոպայում հիմնական նպատակներից է երկրում էլեկտրակաշիկային արտադրման բարձրացումը: Գերմանական հանձնառու ընկերությանը հրաժարման դաժնառով, սույն ասոմակայանի կառուցման աշխատանքը անավարձ մնաց:

Իրանի իսլ. հանրապետության նախագահի տեղակալ եւ էներգիայի կազմակերպության նախագահ Դ. Ռեզա Ամրոլլահի-ն ասաց. «Սույն դրամադրից ստորագրվել է խաղաղասիրական նպատակներով երկրի էլեկտրականության դաշնային ջանքերով համար, որին հասկացվել է ավելի քան 10 միլիարդ դոլար»:

Ասոմակայան էներգիայի կազմակերպության ասոմակայանների գծով, տեղակալ որն. Մոհսեն Բարբադուրյանը այդ դրամադրի ստորագրման կարեւորությունը բացատրեց Տարբեր տեսանկյուններից ֆաղափական, սննդային եւ տեխնիկական: Նա ասաց. «Քաղաքական կարեւորությունը այն է, որ երկու երկրներ Իրանը եւ Ռուսաստանը հակառակ Ամերիկայի եւ արեւմտյան երկրների դժգոհության եւ առանց նրանց իրավունքի, ձեռնամուխ եղան սույն միջուկային խաղաղասիրական համագործակցությանը»:

Ամերիկայի դաշնային Գերատեսչության նախարար Վիլիամ Փերին երուսաղեմում մի խումբ լրագրողների ասաց. «Ամերիկան

մտադրված է այն հարցով թե արագալուծ Իրանը միջուկային մեծ ուժ է ներկայացնելու»: Նա ավելացրեց. «Մենք այս փոփոխությունը ընդունելի չենք համարում եթե Ռուսաստանի օգնության բերումով, Իրանը միջուկային հեղինակություն ձեռք բերի, մենք ուժգնորեն կհակառակենք դրա դեմ»:

Մի այլ ամերիկացի դաշնային, այս կառավարությանը ասաց. «Փերին ակնարկելով Զինաստանից զնված Իրանի զինամթերքին դարձաբանեց, որ Ամերիկան ու Իսրայելը երկուսն էլ հետադարձում են մի նպատակ արգելել զարգացած տեխնիկայի վաճառումը այն երկրներին որոնք սույն տեխնիկան օգտագործելու են նրանց սղառնալու ուղղությամբ»:

Ի միջիայլոց ամերիկյան մի օրաթերթ վերջերս գրեց, եթե Իրանի ասոմակայան ծրագիրը կանգ չառնի, Իսրայելը կհնարակի Իրանի ասոմակայանների վրա հարձակվելու հարցը:

Երկուրք թայնգ օրաթերթը ըստ Ամերիկայի եւ սինդիկատական ռեժիմի անձանք դաշնայինների գրեց. «Ենթադրվում է, որ առաջիկա հինգ տարվա ընթացքում Իրանը հաջողի ասոմակայան ռումբ դաշնային»:

Իրանի մեծական ներկայացուցիչը ՄԱԿ-ում հերքելով սույն արտահայտությունը ասաց. «Իրանը չի ձգտում ասոմակայան սղառնալիքները եւ ըստ իր ազգային ֆաղափականության, նա հակառակ է որել ասոմակայան սղառնալիքները եւ այլ զանգվածային սղառնության զենքի գործածմանը»:

Սույն հարցի կառավարությանը եզրորոշի արագորձ նախարար Ամրո Մուսան սինդիկատական ռեժիմին նախաըզուցեց Իրանի ասոմային սարքավորումների վրա հարձակման հետեւանների վերաբերյալ եւ առաջարկեց հրաժարվել որել այդպիսի ձեռնարկից:

Ըստ Գերմանական լրատվության Ամրո Մուսան ասաց. «Բռնությունը ելլ չէ եւ բռնությամբ նպատակին հասնելը այժմյական գործածություն չունի»:

Ըստ սույն հարցումն նա ասել է. «Զնաբան է, որ նմանատիպ ֆայլերը դաժնա զառնան, որոնք սինդիկատական իրավիճակը կրկին վերադառնա խաղաղ բանակցություններին նախորդող սլված դրությանը»:



ԵՐԿՈՒՆՆՈՐ ՕԳՄՆԱՎՆԵՐ

«Գոմա» օդային ընկերությունը գնեց երկու էյր-բաս օդանավ նպատակ ունենալով փոխարինել հնացած օդանավներին:

Իսլանդական հանրապետության օդային ընկերության սնորհն որն, Շաֆթին ասաց. «Նոր օդանավները համարյա չեն տարբերվում հներից բայց ավելի որակով են մանավանդ ադապտացիան սարքավորումների եւ ծախսերի նվազեցման առումով», նա իր խոսքը շարունակելով ասաց. «Սույն օդանավները դաշնային են զարգացած տեխնիկայով, դրանց վառելիքի ծախսումը համեմատ նույն տիպի ամերիկյան օդանավների 50 տոկոսով ավելի քիչ է»:



170 Քաղաքական-հասարակական կազմակերպություններ գործունեության արժանություն ստացան

Ըստ «Կուսակցությունների 10-րդ հոդվածի հանձնաժողովի նախագահի, «Ցայժմ 170 կուսակցություն եւ ֆաղափական-հասարակական կազմակերպություններ գործունեության արժանություն են ըստացել»:

Դադական իշխանության նախագահի ֆաղափական գծով խորհրդատու Ա. Բաղամչյանն ասաց. «Սույն արժանությունները սլվել են կուսակցությունների մասին հաստատված օրենքով»:

Ընկնում է նաեւ մի շարք կուսակցությունների եւ ֆաղափական եւ հասարակական կազմակերպությունների գործունեության արժանությունը:

11→

Հայաստանի գրողների ողջ միությունը: Աշոտ Աբրահամյանի հետ կապված ճախողումն էլ, որոշ առումով, միության աշխատանքների կապմալուծման պատճառ դարձավ:

Այս ավանդատուների անունները վաղուց հայտնի էին, իսկ այդ ՀՅԴ-ն մինչ օրս լռել էր Աշոտ Աբրահամյանի հետ փոխանչությունների մասին:

Հասկանալի է, թե ինչու պիտի որեւէ կուսակցություն պարտողի ճանապարհներով Ֆինանսական գործունեություն ծավալի՝ սա օրենքի խախտում է: Պարզ է նաեւ, որ որեւէ գործարար չպիտի հաջողի այս պայմաններում, երբ դուարի փոխարժեքն օրեցօր բարձրանում է: Իսկ Աշոտ Աբրահամյանի քախտը կրկնակի չէր բերել, քանի որ, ըստ իր վկայության ռազմական հարցերի պատասխանատու Նույն Հրանտ Մարգարյանը տոկոսադուրյանը վանապան հիմնավորումներով ու նաեւ սպառնալիքներով, 3-4 օրը մեկ էր պահանջում: Ու այդ անընդհատ հատկացումներին զոհաբերվեցին եւ Իրանի հետ գործարար կապերի շնորհիվ ստացված շահույթը, եւ պարտադրված վանապան օրինական եւ ապօրինի գործարքները, եւ վարկերը, եւ, ի վերջո, «Հայաստան» միության կապում գտնվող «խանութների վերջին մեխի վաճառքից ստացված գումարները»:

Հետաքրքիր այլ մանրամասն եւս: Տեսաերիզում Աշոտ Աբրահամյանը վկայում է ՀՅԴ եւ Երեսնում հանրահայտ Մաֆիոզ Գագոյի, Մոսկվայի քրեական հեղինակություն Մեերի կապերի մասին: Արդյո՞ք մամուլի ասուլիսում ակնարկները՝ հանցագործ խմբերի մասին, որոնց անունը կապվելու է դաշնակցության հետ, հենց նրա՞նց չի վերաբերում:

Ինչեւէ, հարցերը բազմաթիվ են: Այս թեման առավել քան տարողունակ ու ծավալուն է: Մակայն առայժմ սահմանափակվենք այն պատասխանով, որ «Ապատություն» ռադիոկայանի հարցին տվեց Վահան Հովհաննիսյանը, այն է, ի վերջո, հերքեց կամ հաստատեց, այդ գումարները եղե՞լ են, դուք Աշոտ Աբրահամյանի հետ առնչություններ ունեցե՞լ եք, թե՞ ոչ: «Այդ տեսանկյունով որեւէ բան իրականությանը չի համապատասխանում: Հիմա գնում է Աշոտ Աբրահամյանի գործով քննություն, քննիչը պահանջել է մի շարք դաշնակցականներից առերեսում Աբրահամյանի հետ, բոլոր առերեսումների ընթացքում նա իրաժարվել է տեսաերիզում իր կողմից տված ցուցմունքներից»: Քիչ հետո պրն. Հովհաննիսյանը շարունակեց. «Ի միջիայուց, եթե անհատը դրել է որեւէ գումար որեւէ բանկում, դա իր անձնական խնդիրն է, եւ ոչ «Բանքերը», ոչ էլ որեւէ մեկը իրավունք չունեն դրանով հետաքրքրվելու, իսկ կուսակցությունը որեւէ գումար Հայաստանի կամ ԱՊՀ տարածքում գտնվող որեւէ բանկում երբեք չի դրել»:

Իմ տպավորությամբ, այս եւ այս կապակցությամբ այլեւայլ հարցերին պատասխաններ լիաճաշն տալուն դաշնակցական գործիչները դեռեւս անպատրաստ էին: Այլապես չէին այսի. «Ոչ, ձեր գործը չէ»:

Չայած հենց իրենք օդի մեջ բռնեցին իշխանությունների նետվելու պատրաստ ձեռնոցը այս ասուլիսով փորձեցին մարտահրավերի նախաձեռնությունը ստանձնել:

Կարծում եմ շատ ժամանակ չի անցի, մինչեւ կհետեւի պատասխան քաչը: Այդժամ միայն այդ թեմային առնչվող մամուլի ասուլիսներն ավելի կոնկրետ ու հետաքրքիր կդառնան եւ անտեղյակ մնացած լրագրողների հարցերի սակավության պատճառով այնպես արագ չեն ավարտվի, ինչպես այս մեկը:

Աննա Իսրայելյան
«Ապատություն» ռադիոկայան
«Հայք» 9-12-94

Խորհրդարանի նախագահ պրն. Նաթեղ Նուրի շնորհավորականը ամանորի առթիվ

Իրանի իսլամական խորհրդարանի նախագահ պրն. Նաթեղ Նուրին երկուշաբթի 12 դեյ-ին (հունվար 2-ին) իր շնորհավորանքի պատգամը հղեց Քրիստոնյա երկրների իր համադասներին:

Այս պատգամում ասվել է. «Դժբախտաբար նոր տարին սկսում ենք, այնպիսի պայմաններում, երբ աշխարհի տարբեր շրջաններում դեռ շարունակվում է պատերազմն ու արհավիրքը, արյունահեղությունն ու բռնությունը»:

Պրն. Նաթեղ Նուրիի շնորհավորական խոսքի մի այլ բաժնում ասվել է. «Վաղուց իվեր, Քրիստոնյանները եւ Մուսուլմանները Իրանում բարեկամաբար եւ խաղաղությանը են ապրել իրար հետ միմյանց կողքին եւ իսլ. հեղափոխության ու դրան հաջորդած պատերազմի տարիներին այդ մարդկային սերտ ու դրական կապը ավելի է ամրապնդվել մինչեւ այն աստիճան, որ երկու ազգերն էլ պայքարել ու փոխվել են Նույն ճակատում»:

Նույնպես հանր. նախագահի առաջին տեղակալ՝ դոկտ. Հասան Հաբիբին իր շնորհավորական խոսքը ուղղեց աշխարհի 39 Քրիստոնյա երկրների ղեկավարներին: Դոկտ. Հաբիբին իր շնորհավորանքի մեջ մաղթել է, որ գալիք տարին բոլոր երկրների փոխհասկացողության, համագործակցության, ինչպես նաեւ խաղաղության, արդարության մարդկային իրավանց հաստատության տարին լինի:

Հանր. նախագահի առաջին տեղակալը սույն պատգամում մաղթեց Քրիստոնյա ազգերին հաջողության եւ հառաջադիմություն:

Իրանի ռազմական ուժը ժողովրդային է եւ ոչ ատոմային

Իրանի իսլ. հեղ. պահպպորի միացյալ շտաբի պետ Մոհամադ Բադեր Զուղադը արեւմուտքի տարածած այն լուրի վերաբերյալ ըստ որի Իրանը ջանանում է ատոմային պենքեր ձեռք բերել եւ հնարավոր է, որ այդ հանգամանքը օգտվել Իրանի ճնշման ենթարկելու համար ասաց. «Համաշխարհային բռնապետության քարոզչությունը Իրանի ատոմային պենք հայթայթելու վերաբերյալ միանգամայն սուտ է»:

Նա ավելացրեց. «Իրանի իսլ. հանրապետության երկիրը թշնամիների դեմ պաշտպանվելու համար ատոմային պենքի կարիք չունի, քանի որ նրա ուժը ժողովրդային է եւ ոչ ատոմային»:

Նա իր խոսքերի ավարտին ասաց. «Իսլ. պահակազորը պատրաստ է դիմակայելու ամեն մի սահմանային ոտնձգություն, երկրում անվտանգություն ապահովել»:

Իրան - Հայաստան կաղերի զարգացում

ՀՀ փոխնախագահ Գագիկ Գարությունյանը, Իրանի Իսլամական Հանրապետության դատախազության այցը Երեսն գնահատեց, որդեւ հայ-իրանական կաղերի զարգացման շահ կարելու գործն: Նա հայտնեց, որ համաձայն հանձնաժողովի հերթական նիստի օրակարգում կա ավելի քան 10 հարց, որոնք ընդգրկում են իշնդես էկոնոմիկան, սրանսդորը, առեսուրը, էներգետիկան, այսդեւ էլ գիտությունն ու մշակույթը:

ԿԱՐՔ ԼՈՒՐՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

Հայկական ասոնային էլեկտրակայանը կվերագործարկվի սույն արվա առաջին ամիսներին

Ըստ Ռուսաստանի միջուկային էներգետիկայի նախարարության ԱէԿ-ների գիտահետազոտական ինստիտուտի սնօրեն Արմեն Արադյանի, հայկական ԱէԿ-ում փաստորեն ստեղծված են բոլոր հիմնական սարքավորումները: Նրա խոսքերով, կայանի գլխավոր հանգույցների շոգեգեներատորների, ռեակտորի կորդուսի, գլխավոր խողովակաշարերի զենուները դրական արդյունք է սպել: Արադյանի կարծիքով, հայկական ԱէԿ-ի արդարացիության աշխատանքների ընթացիկ կարելի է հուսալ, որ կայանի առաջին բլոկի օգտագործումը կսկսվի 1995 թ. առաջին ամիսներին:

Հարկ է նշել, որ հայկական ԱէԿ-ը սովետական արի-ներին առուն-ծնեռ օրջանում ցալիս էր Հայաստանի էլեկտրաէներգիայի 40-42 տկոսը, մնացած օրջաններում 35: 400 մեգավատ (մվտ) հոսանք էր ցալիս ԱՄՆԿՆԿ-կապի կենտրոնական դիստրիբյուցիոն վարչությանը եւ 100 մվտ Թուրքիային: ԱէԿ-ի մեկ բլոկի գործարկումը 60 տկոսով կավելացնի Հայաստանում այսօր արտադրվող էլեկտրաէներգիայի րանակը, եւ դրանով կլուծվի կեն-ցաղային կարիքների, հոսանքով արդառավման հարցը:

XXX

Հայաստանի ասոնակայանը երկրաւարժական վճանգավոր գեւնի վրա չի գեւնվում

Հայ եւ օտար գիտնականների կողմից կատարված րնությունները այն համոզումը սեղծեցին, որ ասոնակայանի զոնե 20 կիլոմեթր օուրջուրը երկրաւարժային վճանգավոր վիժակ չի ներկայացնում: Հայաստանի գիտնականներն ու րալացի մասնագետները այս մասին որոշ ժամանակից ի վեր րնություններ էին կատարում: Նրանք այս կերպով հերեցին այն ոմոզումները, թե Հայաստանի ասոնակայանը գեւնվում է երկրաւարժային ոուրբու վճանգավոր գեւնի վրա:

XXX

Ղյուրացնելու համար Սեղրիի կամուրջի շինարարությունը

Հայաստանի Փոխարդության եւ Հաղորդակցության նախարար Հեներիկ Գոցիկյան 15 դեկտեմբերին (21 ագար) Սեղրի գնաց երկօրյա աշխատանքային ծրագրով: Նախարարությունը հաղորդեց թե րանի Հայաստանի դեսարան Ռեզա Նիհար եւնահանի եւս կրնկերակցեռ նախարարին: Հավանական է, որ այս այցելության նդասակն էր դյուրացնել շինարարությունը Սեղրիի կամուրջին, որ կկառուցվի Արաքս գեւի վրա, միացնելու համար րանը Հայաստանին: Այս այցելության ընթացիին շինարարության մասին բազմաթիվ հարցեր ոիսի րնարկվեւն րանական կողմի հեւ:

XXX

Գլխավոր մայրուղիները փակ են

Հայաստան մեւող երկաթուղային վեց մայրուղուց չորսը գալիս են Ադրբեջանից: Առավելագույն թեւաթողություն եւ նեւանկություն ուներ րան-Ադրբեջան սահմանով Սեղրի մեւող գիժը, որը արունակվում է դեմի Նախիջեւանի իննավոր Հանրադեսություն, աղա երասխավանում կրկին մուտք գործում Հայաստան: Մեծ նեւանկություն ուներ նաեւ Աղսաժա-Իջեւան հասվածը, որը սղասարկում էր Հայաստանի հյուսիս-արեւելյան եւ հյուսիսային օրջաններին: Հայաստան մեւող մյուս գիժը

րան-Ադրբեջան սահմանով մնցնող երկաթուղու Սի-ցեւան-Կարան ծյուղն է:

երկար ժամանակ Հայաստանն օգտվում էր Թուրքիայից Ախուրյան կայարան մեւող երկաթգից, որով սացվում էր թե մարդասիրական օգնություն եւ թե իրականացվում էր աշխույժ առեւտուր եւրոդայի հեւ:

Սակայն 1992 թ. Անկարան փակեց այս ժանաղարիղ դա դայմանավորելով դարաբաղյան դասերազմում հայկական ուժերի առաջընթացով:

Ներկայումս Հայաստան մեւող միակ գործող երկաթգիժը Թրիլիսի-Մառունելու - Մաղախլը-Այրուն ժանաղարիղն է: րեւան-Մոսկվա գնացը, որ «ամենահայեւնի» մարդասար ուղերթն էր, ժամանակին մնցնում էր այս ուղով: Բայց Կրասանով մնցնող երկաթուղու ամենաբանուկ ծյուղը Սամսրեղիա-Սուխում-Սոչի-Ռուսաստան երկաթգիժը, եւս վրաց-աթխագական հակամարտության դասժառով 1992 թ. դաղարեց գործել: Ի դեմ, չնայած լեւնային դայմաններին եւ սահմանափակ հնարավորություններին, Ադրբեջանի կողմից իրականացվող օրջա-փակման սկզբնական օրջանում հեւց այս երկաթուղին իր վրա վերցրեց Հայաստանի թեւնափոխադրումների հիմնական ծանուրությունը:

Այժմ գործում է միայն Բաթում-Սամսրեղիա-Թրիլիսի-րեւան գիժը:

XXX

Տնեւական դափնիներն առայժմ Հայաստանին են

«Ինեւեժաւս» գործակալությունը հաղորդում է, որ Անկարա Պեսությունների Համագործակցության (ԱՊՀ) վիժակագրական կոմիտեի սվյալներով, ԱՊՀ երկրների արտադրության ծավալները, 1993 թ. առաջին կիսամյակի համեմատությամբ, այս արի նվազել են 27.6 տկոսով: Պասկերն այսուիսին է. Ռուսաստան 25.8 տկոս, Ռկրաինա՝ 36 տկոս, Թուրմենստան 33 տկոս, Բելառուս 31.5 տկոս, Ղազախստան 29 տկոս, Ադրբեջան 25 տկոս: Արտադրության ծավալի ամենամեծ մնկում արժանագրվել է Կրասանում 50 տկոս: Հայաստանում սակայն, արիներ արունակ արժանագրված կսրուկ մնկումից հեւս, արտադրության ծավալն մեւել է 4 տկոսով: Հայաստանն, ի դեմ, միակ երկին է, որ տնեւական վերել է աղում:

XXX

Հայաստանում հանցագործությունը րչացել է

1994 թ. առաջին կիսամյակում Հայաստանում ներին գործերի նախարարության աշխատակիցների կողմից գրանցվել է 5029 հանցագործություն, որը 32 տկոսով ցածր է մնցյալ արվա նույն ժամանակահատվածի համեմատ: ՀՀ վիժմեւվարչության սվյալներով, հանցագործությունների 31.6 տկոսը գողություններ են: 2.4 մնգամ նվազել է առանժնակի դաժանությամբ կատարված հանցագործությունների թիվը:

Նեւված ժամանակահատվածում հանրադեսությունում կատարվել է 60 կողոպուտ եւ 80 ավազակային հարժակում:

XXX

Փախսականների րանակը Հայաստանում

Հայաստանի մեց գրանցված են 301.900 փախսական: Նրանցից 158 հազարը աշխատում են, 79 հազարը մնգործ են, իսկ մնացածը երեխաներ են: Այս թվից 260 հազարը գաղթել են Ադրբեջանից, 57 հազարը Արցախից եւ 12.800 Շահուդյանից: Փախսականների 46 հազարը բարժագույն կրթություն ունեն, իսկ 157 հազարը միջնակարգ:

Կասեցվել է հանցանքի գործունեությունը

ՀՀ ազգային անվանգործության ղեկավար վարչությունը եւ Ռուսաստանի հակահեռախուզության դառնային ծառայությունը, բմրանյութերի միջազգային ամօրհնի շրջանառության դեմ լայնածախ արդյունաբերական արտադրության համաձայն օրենսդրության, կասեցրել են միջազգային բմրանյութերի արտադրության հանցավոր գործունեությունը: 1994 թ. դեկտեմբերի 2-3-ին Մոսկվայում եւ երեսնում կալանվել են մի խումբ անձինք, որոնց մոտից առգրավվել է հերոինի խոտոր խմբաքանակ, մեծ թվով հրազեն, զինամթերք եւ լայնուցիկ նյութեր: Հարուցվել են բեռական գործեր, կասարվում է հետախուզություն:

Խաժակն ու իր ասուլիսը

ՀՀ «Հայաստանի» կենտրոնական կոմիտեի անդամ Խաժակ Տեր-Գրիգորյանը ասուլիս է արել «Ալիքին», որտեղ որդես նախարարն «Ալիքի» խմբագրությունը հիշալից ներկայացնում է որդես «այսինչ» եւ «այնինչ» մտանալով, որ նույն «Խաժակ» կոլեկտիվը սրանից քանի տարի առաջ մեր երկրի աղաքակրթության ուժերի կողմից հեռախուզական աշխատանքներ կատարելու մեղադրանքով ձերբակալվել եւ երկար ժամանակ բանտարկված էր:

Նյութը շատ չերկարացնելու նկատառումով միայն նշենք մեկ կես ասուլիսից, որում կարելի է տեսնել դաճակ դեկավարի հոգեբանությունը:

Հարց- Ինչպե՞ս է հիմք ունի «Ռո» գաղտնի կազմակերպության գոյությունը եւ ի՞նչ կադր ունի ՀՀ-նակցության:

Պատ.- ...Այսօր էլ դաճակցությունը եթէ Արցախում զենք ձեռքին կուրծք է արքեպիսկոպոսական իրապետների դեմ...

Եվ մի ուրիշ տեղ ավելացնում է. «Իսկ եթէ կան այդպիսի անձինք դաճակցության մեջ, դաճակցության սովորոյթը այն է, որ իր ձեռքով լուրջ երթուղի գանգառուին: Եթէ «Ռո»-ն որդես կազմակերպություն գոյություն ունի եւ նրա մեջ կան դաճակցականներ, դա բարատար դասժող է, որ դաճակցության գործունեությունը առկալիս, այլ ոչ ոք է զանգառուները ձերբակալեն եւ յանձնեն դատի»:

Նախ հասկեցնենք հենց ինքն ուր, Խաժակի համար, որ այսօր Արցախում կոմիտե է հայկական բանակը եւ ոչ թե կուսակցական ջոկատներ, որտեղ մի ստեղ:

Երկրորդ, լուրջ է հիշեցնել «ընկեր» Խաժակին, որ Հայաստանը մի գաղութ է, որ դաճակցությունը փորձի անեն ինչին տեղ կանգնել, այլ ինչպե՞ս օտար երկրները մի երկիր է, որն ունի իր կառավարությունն եւ կարգ ու կանոնը եւ որտեղ հանցագործի (կամ ինչպե՞ս ինքն «ընկեր» Խաժակն է նախընտրում ասել «զանցառուի») լուրջ դասժող ըստ երկրի կանոնների: Երրորդ «ընկեր» Խաժակ, դա ձեր կուսակցության սովորոյթն է, որ կուսակցության սխալներն ու դավաճանությունները բեռնում է անհասների վրա, եւ այդպե՞ս էլ դավաճան է կոչում Զորավար Անդրանիկին, Հովհաննես Զաքարյանին, Շահան Նաթալին եւ շատ ու շատ ուրիշների:

Իսկ ուր, Խաժակ, ձեր 70.000 դոլարը, որ հասկացրել էի Հայաստան միավորման (Հայաստանի առաջին բաժնետիրական ընկերությունը), ի վերջո ձերն է թե կուսակցությանը, Հրանտ Մարգարյանի 20.000 դոլարը եւ բժիշկ Վարդիկի 15000 դոլարը եւ ուրիշ դաճակցականների դոլարներն ինչպե՞ս:

Գ. Արարեկյան

Իրան-Հայաստան գազամուղի աշխատանքները շարունակվում են

Ֆրանսիայի հայկական հիմնադրամը հաղորդում է, որ ավարտվեց Իրան-Հայաստան գազամուղի կառուցման առաջին փուլը, որն ընդգրկում էր. ա) գազամուղի ուղու ձեւումը Արախց Բաջարան ցանող (տեղագրության վրայով, բ) այդ ուղու երկարաբանական սվայների ստեղծումը, գ) գազամուղի ծառայողական աշխատանքների ավարտումը: Այս ամենն իրականացնում է «Հայազգնա-խազիծ» ինստիտուտը «Հայաստան» համահայկական հիմնադրամի օժանդակությամբ:

Իրան-Հայաստան գազամուղի ծրագրի երկրորդ փուլը եւս մոտենում է ավարտին: Այն վերաբերում է իրանական գազի գնման լայնածախային բանակցություններին, որոնք կկայանան երեսնում եւ Թեհրանում, առաջ կըսկսվի գազամուղի շինարարությունը: Սկզբնական շրջանում գազամուղի միջոցով Հայաստան կներմուծվի 3 մլն խմ գազ կուսակցականությամբ այսօր հանրադատություն մոտենող գազի փոխարին: Հետագայում Հայաստան կնսնի 9 մլն խմ գազ: «Հայաստան» հիմնադրամը այս աշխատանքների համար նախատեսել է քառասուն 10 մլն ամերիկյան դոլար: Իր դրամական օգնությունը կրելի Ֆրանսիայի հայկական հիմնադրամը:

Հայաստանում գործազուրկի կարգավիճակ ունի 112 հազար մարդ

ՀՀ սոցիալական դաճակցության եւ աշխատանքի նախարարության զբաղվածության վարչության սվայներով, հուլիսի 1-ի դրությամբ Հայաստանում գործազուրկի կարգավիճակ ունի 112,8 հազար մարդ: Անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ գործազուրկների թիվն աճել է 1,3 անգամ, ինչպե՞ս նշում են մասնագետները, գործազուրկների զեղակալում մասը (60,9 տոկոս) կանայք են:

ՀՀ քաղաքային հայտարարությունը

ՀՀ նախագահի 28 դեկտեմբերի հրամանագրին ու Հայաստանի Գերագույն ասլանի 13 հունվարի վճիռն ի դասախան ՀՀ-ի քաղաքն արձակեց մի հայտարարություն (տեղ «Ալիք» օրաթերթ, 19.1.95), որում ի միջալոց շեշտվում է.

«Առ այդ, ՀՀ-ի Բիւրօն որոշեց. Ա.- Առկալիս «Հայաստան» Համահայկական հիմնադրամի աշխատանքներում մասնակցությունը բոլոր մակարդակներում վրայ:

Բ.- Առկալիս Հայաստանի դեմադրանքներում եւ ներկայացուցչություններում նիւթական եւ բարոյական օժանդակությունները»:

Եւ այս հայտարարության համար շնորհակալ են ՀՀ-ի քաղաքային, եւ թույլ զվեք համայն Ափյուրահայտության անունից նաեւ Շնորհակալություն հայտնել, որովհետեւ այսուհետ դաճակցականները չեն կարող ինչ-ինչ փոքրիկ թագնված Հայաստանի անունով դրամ կորզել ժողովրդից ու ծախսել Հայաստանում հեռախուզական կառույցներ ստեղծելու համար:

Ս. Զեփեյան

ՀԱՅԱՍՏԱՆՆԱՆ • ՍԱՄՈՒԼ

Նիյազովը, գազը եւ ազգային հոյարսուքունը

Ռեկտեմբերի 2-ին Վրաստանին ու Հայաստանին թուրքմենական գազի մատակարարման հարցի շուրջ բանակցություններ վարելու նպատակով անակնկալորեն Աշգարատ էր մեկնել հայկական քարձրաստիճան մի պատվիրակություն. գլխավորությամբ ՀՀ Նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի: Նույն օրը եւ նույն նպատակով Թուրքմենիա էր ժամանել նաեւ Էդվարդ Շեարղնաձեն:

Ինչ խոսք, նոյեմբերի 18-ից թուրքմենական գազի մատակարարման դադարեցման հետեւանքով էլեկտրաէներգիայի ճգնաժամ էր ստեղծվել Վրաստանում ու Հայաստանում: Ստեղծըված ծանր վիճակը Շեարղնաձեին ստիպել էր դիմելու Ռուսաստանի ու Թուրքմենիայի նախագահներին խնդրելով օգնել Վրաստանը գազով ապահովելու գործում: Ըստ երեվույթին քուլիսների հետեւում օգնության նույնանման ճիգեր էր գործադրում նաեւ հայկական կողմը, որի արդյունքում ձեռք էր բերվել Ստավրոպոլից Հայաստանին օրական 2 մլն խմ գազ մատակարարելու պայմանավորվածություն:

Հակառակ Ստավրոպոլից գազի հոսքի քայքայմանը, հայկական պատվիրակությունը Աշգարատում շարունակում էր թուրքմենական կողմի հետ քննարկել գազի մատակարարման վերսկսման հետ կապված հարցերը, որով ձեռք էր բերվում համաձայնություն, ըստ որի Հայաստանը 1995-ի ընթացքում նպատակվոր պայմաններով գազ էր ստանալու Թուրքմենիայից: Երկու երկրների վարչապետների միջեւ ստորագրվում էր նաեւ առեւտրատնտեսական համաձայնություն:

Թուրքմենիայի նախագահ Սափարմուրադ Նիյազովի, Վրաստանի ղեկավար Էդվարդ Շեարղնաձեի եւ Հայաստանի նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի միջեւ ստեղծված բանակցությունները, մանավանդ գազի մատակարարումների շուրջ, Անդրկովկասի երկու երկրների համար խոսումնալից ավարտ ունեցան, երբ բանակցություններից հետո կայացած մամլո ասուլիսում, Նիյազովը, շրջապատված Շեարղնաձեով ու Լեւոն Տեր-Պետրոսյանով հայտարարեց գազի ծորակը վերաբացելու մասին որն ընդունվեց ծափահարություններով:

Միլիոնավոր մարդկանց համար ուրախացուցիչ այդ հայտարարությունը զուգացուցվեց ազգային մեր հպարտությունը շուրջ ու հայկական պետականության ձեռք բերած հեղինակությունը հաստատող դրվագներով: Շեարղնով Հայաստանի վստահելի ու պարկեշտ գործընկեր լինելը, Թուրքմենաշին քոլորի առաջ Շեարղնաձեին ստիպեց դեպի Հայաստան գազի անխափան հոսքը երաշխավորող հայտարարություն անել:

Ճիշտ է, գազի կարիքից այրվում են երկու հանրապետություններն էլ, դիմագրավելով քաղաքացիականներ, սակայն ի տարբերություն խորհրդային դիվանագիտության երբեմնի ղեկավար Շեարղնաձեի նեկայիս խնդրարկվի վիճակին, նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյան Աշգարատ էր մեկնել հավասարների միջեւ համաձայնություն կնքելու ու փոխշահավետ առեւտուր անելու համար, որի ապացույցը նրա ինքնավերստահ, հանգիստ եւ արժանապատիվ պահվածքն էր մամլո ասուլիսի ընթացքում, որտեղ հստակորեն երեւում էր, որ Հայաստանը Թուրքմենիայից ողորմություն չի խնդրում, այլ իր վճարածի ու վճարելիքի դիմաց գազ էր ուզում ներմուծել:

Տնտեսական աճ, այնուամենայնիվ, արձանագրվել է

Ըստ Միջազգային վալյուտային ֆոնդի, Հայաստանում չկա տնտեսական աճ, չկա նաեւ անկում: Ամերիկյան որոշ թերթեր, անցկացնելով ինքնուրույն հետազոտություններ, պնդում են, որ աճը կապվել է շուրջ 4 տոկոս: Իսկ մի քանի այլ աղբյուրներ իր տվյալներով նշվում է 7 կամ 11 տոկոս:

Դժվար է ասել տնտեսական անկման կասեցումն ինչով է քայքայվում, եւ ինչու այս երեւույթը դիտվում է ԱՊՀ երկրներից միայն Հայաստանում: Եվ այն դեպքում, երբ ԱՊՀ երկրների շարքում Հայաստանը աշխարհագրական ամենաանբարենը պատ դիրքն ունի եւ ստիպված է ունենալ ժամանակակից եւ, հետեւաբար, ավելի թանկ միջոցներով պաշտպանունակություն: Գուցե տնտեսությունն այնքան էր քայքայված, որ արտադրության փոքր-ինչ աշխուժացումը դիտվում է տնտեսության աճ:

Որքան էլ քննադատենք կառավարությանը նրան մեղադրելով անգործության, պետական ունեւլածքի թալանի նկատմամբ անտարբերության մեջ, այդուհանդերձ, զգացվում է տրևտեսության ռազմավարական ինչ որ ծրագրի գոյություն. Բացի այդ, կարծես վերացել է խուճապի այն մթնոլորտը, որը շրջափակման առաջին երկու տարում տիրում էր տնտեսական օղակներում:

